Ազգ
Azg
30 ՅՈՒՆՈՒԱՐ 2009 ՈՒՐԲԱԹ 14 (4150)
ISSN: 1829-1651

# Ըստ Ծգնաժամային խմբի՝ մադրիդյան սկզբունքները խնդրի լուծման լավագույն հիմքն են

Այդ մասին այսօր «Թրենդ»-ին ասել է ՄՃԽ-ի եվրոպական ծրագրերի տնօրեն **Սաբինա Ֆրեյզերը**: «Ճգնաժամային խումբը գտնում է, որ մադրիդյան առաջարկությունների հիման վրա շարունակվող բանակցությունները հակամարտության խաղաղ կարգավորման լավագույն միջոցն են», ասել է Ֆրեյզերը: Նրա խոսքով՝ խիստ կարեւոր է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարներն իրենց երկրների հասարակայնությանն իրազեկեն եւ նրա հետ խորհրդակցեն Մինսկի խմբի առաջարկությունների շուրջը: «Քաղաքացիական իրազեկվածության բարձրացումը եւ ադրբեջանցի ու հայ գործընկերների միջեւ քննարկումները շատ կարեւոր են խաղաղ գործընթացում առաջընթացի հասնելու համար»,- հավելել է նա, հաղորդում է «Արմենպրեսը»:

# «Ի դեպ, ապրիլի 24-ին աշխարհը չի քանդվում»

## Դավոսում ՀՀ նախագահի հետ հանդիպումից առաջ հայտարարել է վարչապետ Էրդողանը

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը Համաշխարհային տնտեսական համաժողովին մասնակցելու համար Դավոս էր մեկնել հունվարի 27-ին: Ուղեւորվելուց առաջ Անկարայի օդանավակայանում խուսափողական պատասխան էր տվել լրագրողների հարցին, ասելով. «Ներկա պահին խնդրո առարկա չէ մեր վարչապետի ծրագրված որեւէ հանդիպումը նախագահ Սարգսյանի հետ»: Այնուհետեւ նա նշել էր, որ ինքը հավանաբար կհանդիպի Հայաստանի արտգործնախարար Նալբանդյանին, սակայն ժամը դեռեւս որոշված չէ:

Հունվարի 28-ին արդեն Դավոսում, պատասխանելով Անկարայում NTV-ի ներկայացուցչին, ասել էր, որ Հայաստանի հետ շփումները տարբեր մակարդակներով շարունակվում են, ինքը հանդիպել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Թեեւ





Բաբաջանը չէր մանրամասնել, սակայն հանդիպման ավարտին CNN-turk-ին տված հարցազրույցում ասել էր. «Անձամբ չեմ զարմանա, եթե մենք կարգավորման հասնենք այս տարի: Այսինքն 2009-ը կարող է բեկումնային տարի լինել Թուրքիա-Հայաստան հարաբերությունների համար, միայն թե կողմերն ի վիճակի լինեն մինչեւ վերջ պահպանել դրսեւորվող քաղաքական կամքը: Մենք այդ կամքն ունենք, տեսնում ենք, որ Հայաստանն էլ ունի, սակայն կարեւորը դրա մինչեւ վերջ դրսեւորումն է ու վերջնակետին հասնելը»:

Տես էջ 8

ՀԱՄԱՌՈՏ

## Հռոմում այգի՝ Ցեղասպանության զոհերի հիշատակին

Հռոմի քաղաքապետարանի մշակույթի հանձնախումբը որոշում է ընդունել մայրաքաղաքի «Պորտուենսե» այգին ձոնել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: «20-րդ դարի առաջին ցեղասպանության վերաբերյալ արդարության ճանաչումը հույժ կարեւոր է Հռոմում ապրող հայ համայնքի ներկայացուցիչների համար», նշել է այդ առթիվ հանձնախմբի անդամներից մեկը: Այս մասին խմբագրությանը տեղեկացրել է Լոնդոնից **Ասատուր Կյուզելյանը**:

Հ. Ծ.

## Հայկական կողմը շարունակում է մասնակցությունը Կովկասյան պլատֆորմի ստեղծմանը

Ստամբուլում հունվարի 26-ին կայացած փորձագիտական երկրորդ հանդիպմանը Հայաստանից մասնակցել է ԱԳՆ աշխատակազմի գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանի գլխավորած պատվիրակությունը: ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության պետի պաշտոնակատար **Տիգրան Բալայանը**, «Արմենպրեսի» խնդրանքով գնահատելով կայացած հանդիպումը, հիշեցրեց, որ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ողջունելի էր համարել անվտանգության պլատֆորմի ստեղծման թուրքական նախաձեռնությունը, եւ հայկական կողմը մասնակցել է արդեն երկրորդ հանդիպմանը: Առաջինը տեղի էր ունեցել Հելսինկիում դեկտեմբերին՝ ԵԱՀԿ ԱԳ նախարարների տարեկան հերթական հավաքի շրջանակներում: Թեեւ նոր հանդիպման ժամկետներ չեն նախանշվել, սակայն հանդիպումների շարունակության պայմանավորվածություն ձեռք է բերվել:

## Կիպրոսում կցուցադրվի «Հրանտ Դինք. երկու ազգերի սիրտը» վավերագրական ֆիլմը

Երեկ երեկոյան Կիպրոսի հայ համայնքի դահճին է ներկայացվել Նուրիցա Մաթոսյանի «Հրանտ Դինք. երկու ազգերի սիրտը» վավերագրական կինոնկարը: Կիպրոսի Հայ դատի հանձնախմբի կազմակերպած միջոցառումը նվիրված է Հրանտ Դինքի մահվան երկրորդ տարելիցին: Ֆիլմը «Նուռ» կինոփառատոնում արժանացել է «Հանդիսատեսի առաջին ընտրություն» մրցանակին: Այս յուրօրինակ ֆիլմը՝ 40 րոպե տեւողությամբ, հիմնված է Մաթոսյանի եւ Դինքի առանձնազրույցի վրա: Այն հայերեն է՝ անգլերեն ենթատեքստով, որտեղ Դինքը պատմում է իր հիմնած «Ակօս» շաբաթաթերթի, Հայոց ցեղասպանության մասին, պատմում հայ եւ թուրք ազգերին հաշտեցնելու իր ջանքերի եւ նույնիսկ, սեփական մահվան մասին, հաղորդում է «Արմենպրեսը»:

## Չախալյանը հացադուլը շարունակում է

Երեկ ավարտվեց Վահագն Չախալյանի գործով հերթական նիստը, լսվեցին 2 վկա եւ 2 տուժողի ցուցմունքները: Ըստ մեղադրական եզրակացության, 2006-ի մարտի 11-ին, ոչ արտոնված ցույցի ժամանակ, ցուցարարները մտել են դատարան եւ պահանջել, որ վրացի դատավորները հեռանան եւ նշանակվեն ազգությամբ հայ դատավորներ: Որպես տուժող հանդես եկող դատավորները նշեցին սակայն, որ Վ. Չախալյանը թույլ չի տվել, որ դատավորների նկատմամբ բռնարարքներ իրականացվեն: Հետո լսվեցին 2 ոստիկան վկաների ցուցմունքներ, որոնք պարզաբանումներ տվեցին այդ դեպքի մասին, որ երբ ցուցարարները շարժվել են դեպի վրացական եկեղեցու թեմի նստավայր, եւ ըստ մեղադրական եզրակացության, իբր թե ցանկացել են մտնել շենք, ոստիկանությունը կանխել է: Որպես վկա ներկայացած ազգությամբ հայ ոստիկանը շեշտեց, որ իրականում ոստիկաններ չկային եւ ժողովուրդը թեմի առաջնորդարան չի մտել միմիայն Վ. Չախալյանի զսպվածության կոչի շնորհիվ: Այլ վկաների բացակայության պատճառով դատավորը ստիպված էր նիստը 2 շաբաթով հետաձգել: Հաջորդ նիստը նշանակված է փետրվարի 11-ին: Վահագն Չախալյանը շարունակում է դեռ 2 օր առաջ հայտարարած հացադուլը:

## ՀԴՄ կտրոնների խաղարկությունը կանցկացվի փետրվարի 6-ին

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով խաղարկությունը կանցկացվի փետրվարի 6-ին: Շահողներն իրենց գումարները կարող են ստանալ արդեն փետրվարի 8-ից: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Գագիկ Խաչատրյանի**, որպեսզի շահումները տրամադրվեն հնարավորինս արագ, պայմանավորվածություն է ձեռք բերվել հանրապետությունում գործող բոլոր բանկերի հետ՝ դրանց մասնաճյուղերում եւս տրամադրելու այդ գումարները: Շահած գումարները, Գ. Խաչատրյանի խոսքով, կտրամադրվեն անմիջապես, բացառությամբ 500 հազար եւ 5 մլն դրամի, որոնց դեպքում կտրոնների պահպանիչ շերտերն առավել լուրջ ուսումնասիրությունների կենթարկվեն, եւ հետո միայն կտրամադրվեն շահած գումարները:

## Պրահա-Երեւան չվերթի ինքնաթիռը վայրէջք է կատարել Տրապիզոնում

Ինչպես տեղեկացանք «Զվարթնոց միջազգային օդանավակայաններ» ընկերության մամուլի քարտուղար **Գեւորգ Աբրահամյանից**, հունվարի 29-ի կեսօրից Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում թռիչքներ եւ վայրէջքներ չեն իրականացվում վատ տեսանելիության պատճառով: Հետաձգվել են նաեւ Պրահա-Երեւան եւ Թեհրան-Երեւան չվերթերը: Հունվարի 29-ի գիշերը, ժամը 4-5-ի սահմաններում Պրահա-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռը հասնելով Երեւանի «Զվարթնոց» օդանավակայան, անտեսանելիության պատճառով չի կարողացել վայրէջք կատարել եւ ուղեւորվել է Թուրքիա ու Տրապիզոնի օդանավակայանում վայրէջք կատարել: Գ. Աբրահամյանը նշեց, որ դեռեւս պարզ չէ, թե որ ժամին Տրապիզոնից-Երեւան կժամանի այդ չվերթը: Իսկ Թեհրան-Երեւան չվերթը



պետք է վայրէջք կատարեր Երեւանի ժամանակով ժամը 11-ին, սակայն հետաձգվել է:

## «Բջնիի» գլխավոր տնօրենը առաջարկում է

Ինչպես տեղեկացանք մեր թերթին տրամադրած «Բջնի» հանքային ջրերի գործարանի գլխավոր տնօրեն **Լ. Հարությունյանի**՝ երկրի նախագահ Սերժ Սարգսյանին հղած դիմումբողոքից, ձեռնարկության տնօրենը դժգոհում է գործարանի ունեցվածքն աճուրդի հանելու գործողություններից: Գլխավոր տնօրենն ընդգծում է, որ ընկերության գույքը գնահատվել է եւ ներկայացվել աճուրդի, իսկ ընկերությունը դրա արդյունքների եւ այն մասին, թե որ գույքն է աճուրդի հանվել, տեղյակ չէ: Ուստի խնդրում է երկրի ղեկավարին՝ օժանդակելու, որ դադարեցվի «անօրինական հարկադիր աճուրդը»: Միաժամանակ առաջարկվում է ՀՀ պետական պաշտոնյաներից, ձեռնարկության մասնագետներից եւ միջազգային մասնագետներից կազմել աշխատանքային խումբ՝ նրանց հանձնարարելով ուսումնասիրելու ձեռնարկության հետ կապված նամակում նշվող փաստերը եւ տալու եզրակացություն: «Տալիս ենք մեր համաձայնությունը օբյեկտիվ եզրակացությունն անվերապահորեն ընդունելու վերաբերյալ», նամակն այսպես է եզրափակում «Բջնիի» գլխավոր տնօրենը:

## Հ. Բաբաջանյանին ծանր վնասվածքներ պատճառած անձը կալանավորված է

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակից Հայկ Բաբաջանյանին ծանր վնասվածքներ պատճառած անձը կալանավորված է: Հիշեցնենք, որ հունվարի 21-ին Հ. Բաբաջանյանն իրենց շենքի բակում անհայտ անձի կողմից ստացել էր սուր, կտրող, ծակող գործիքից ծանր մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց: Փաստի առթիվ ոստիկանության Կոտայքի մարզային քննչական բաժնում հարուցվել էր քրեական գործ: Ըստ «Արմենպրեսի», ձեռնարկված համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ու քննչական գործողությունների շնորհիվ պարզվել է, որ Հ. Բաբաջանյանին նշված վնասվածքները պատճառել է 1981 թ. ծնված Արմեն Զաքարյանը: Վերջինս 2005-ի հունիսի 3-ին դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 176 հոդվածի (կողոպուտ) 2-րդ մասի մեղադրանքով:

# Պետք չէ հասկանալ ադրբեջաներեն, որ հասկանաս, թե ինչի մասին են «երգում»

## 20:26 հարաբերակցությամբ հայտարարություններ ԵԽԽՎ-ում

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

Ադրբեջանական պատվիրակությունը, որ մասնակցում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանին, այս անգամ Ստրասբուրգ էր գալիս մի քանի նախաձեռնություններով, որոնց ծանոթանալու դեպքում կարելի է հասկանալ, թե ադրբեջանական իրականության մեջ ինչպիսի հակահայկական նախագծեր կարող են ծնվել:

Այդպիսիք ավելի հաճախ կարելի է անհեթեթություն համարել, բայց կան նախաձեռնություններ, որոնց դեպքում անհեթեթությունը մեղմագույն մոտեցում կլինի՝ որոշ հարցերում Ադրբեջանի դիրքորոշումն արտահայտող դրույթները որեւէ կերպ, քան ցնդաբանություն, չես անվանի:

Մասնավորապես, հունվարի 28-ին վեհաժողովի պատվիրակներից 20 ներկայացուցիչ ստորագրել է մի դեկլարացիա, որին ծանոթացրել են ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչները: Հայտարարությունը, որ քաղցկական բնույթ ունի, վերնագրված է «1948-53 եւ 1988 թթ. ադրբեջանցիների զանգվածային արտաքսումը Հայաստանից» ու պարունակում է մի շարք դրույթներ, մասնավորապես, ասենք, որ իբր 60 տարի առաջ Ստալինը 150000 ադրբեջանցիների զանգվածային արտաքսում է իրականացրել Ադրբեջան Հայաստանից՝ «տարածքներից, որ պատմականորեն բնակեցված են եղել ադրբեջանցիներով»:

Ադրբեջանցիների կարծիքով, «պաշտոնական Երեւանի կողմից ղեկավարված էթնիկ զտումների հետեւանքով զանգվածային արտաքսում է տեղի ունեցել 20 տարի առաջ» ու կրկին նույն ձեւակերպմամբ՝ «տարածքներից, որ պատմականորեն բնակեցված են եղել ադրբեջանցիներով»:

Տես էջ 3

ԱԶԳ

## Ընթացիկ

# Ի՞նչ ենք անելու մինչեւ ապրիլ



Չէի ուզենա, որ ձայնից չզրկվելը եւ ԵԽԽՎ-ի նոր բանաձեւով տրված ժամանակը իշխանությունն օգտագործեր որպես հաղթաթուղթ, իսկ ընդդիմությունը, հակառակը, փնովեր եվրոչինովնիկներին՝ սեփական երկիրը ձայնից չզրկելու համար: Հակառակը, նոր բանաձեւը ձեռքերում երկուստեք թափահարելու փոխարեն՝ ճիշտ կլիներ, որ թեկուզ մեր իրավական համակարգի մեկ-երկու անգրագետ պատժվեին, քան թե երկիրը, որն ապրիլին, ընդամենը երկու ամիս հետո, նույն դիլեմայի առաջ է կանգնելու:

Ո՞նց հասանք այն սահմանագծին, որ հայ մարդն ամեն ինչ անում է երկրի վիճակը միջազգային կառույցում վատացնելու համար՝ տարբեր սահմանային մասնագետների հմտությունը համադրելու դեպքում եւս դժվար պարզվի:

Ընդհանրապես՝ ուշադիր դիտողը կարող է տպավորություն ունենալ, թե ԵԽԽՎ-ն մի անհայտ խաղ է խաղում Հայաստանի հետ. հա ժամանակ է տալիս, հետո խստանում, կարծես սպասելով, թե ի վերջո ներսում ո՞վ ո՞ւմ է խժռելու ու այդպիսով ակամա, կամ գուցե հենց կամա, մի թեթեւ ուղղորդում է գործընթացները: Այ հիմա էլ եւս երկու ամիս սպասելու է, թե արդյոք իշխանությունն իր վերջին հնարավորությունն օգտագործելով ու ներքին խնդիրները լուծելով՝ ավելի կուժեղանա՞, թե տարատեսակ ներքին թել քաշողներն ավելի են թուլացնելու նրան ու գուցե... Եվ «ժողովրդավարության» ու «քաղաքական կամքի» ֆիքսումը ապրիլին հենց այս բոլորի արդյունքում եւ համապատասխան է լինելու...

Դե, իսկ մերոնք մերոնք չէին լինի, եթե իսկական ենթատեքստերն ըմբռնելու եւ իրապես հարկավոր քայլերն անելու գոնե ձեւ անեին ու համաշխարհային աղմուկը դեռ Ստրասբուրգից չդնեին:

Մի ամիս դեռ խոսելու ենք հաղթանակից կամ պարտությունից: Ընդդիմությունն արդեն արդարանում է (երեւի իր կողմնակիցների առաջ). ընդդիմությո՞ւնն է հասցրել այս վիճակին, ընդդիմությո՞ւնն է ընտրությունները կեղծել, հարցնում են ու Եվրոպային էլ ուղերձներ են անում, թե Եվրոպան պետք է մտածի իր միջազգային քաղաքական վարկի մասին ու ոչ թե երկդիմի պահվածք որդեգրի, ապատեղեկատվության հիման վրա բանաձեւ ընդունի: Եվ թե՝ իշխանության ձայնից չզրկվելու ջանքերը խաբեություն են, կերակրատաշտից զրկվելու վախի արդյունք, աչքակապություն: Այո, կերակրատաշտը մեծ դեր ունի մեր իշխանավորների գործելակերպում, բայց այդպես ասողը շատ լավ էլ գիտի, որ հենց իր դեպքում եւ ողջ ներկա ընդդիմության դեպքում եւս ամեն ինչ կերակրատաշտով է պայմանավորված, իրե՛նց դեպքում էլ դա նշանակություն ունի հիմա, եւ ունեցել է, եւ ինչպե՜ս է ունեցել իրենց իշխանավոր լինելու ժամանակ: Այնպես որ՝ թողեք, հա՞:

Այ, ժողովուրդը պիտի մտածի, թե ինչո՞ւ վատ չինովնիկի կամ ամբիցիոզ ընդդիմության պատճառով ինքն ու իր երկիրը պիտի տուժեին, պիտի մտածի, թե ինչո՞ւ միամտաբար հավատաց ընդդիմադիր կատարը տաքացրած մի քանի մարդու եւ գնաց ոչնչի չբերող մարտիմեկյան սրացումներին. որ «ժողովուրդը 20 տարի գին է տվել, հիմա վերջնական հետեւություն անելու պահն է եւ կանի, ու, որ սրա վերջը վատ է լինելու», ինչպես մեր կարկառուն ընդդիմադիրներից մեկն է ասում՝ էդ ճիշտ է, բայց միաժամանակ վատ է լինելու ե՛ւ իշխանավորի, ե՛ւ նավթալինահոտ ընդդիմության համար, քանի որ նա՝ Հայաստանի քաղաքացին, հոգնել է ամեն օր էս մի քանի ընդդիմադիր նշանակվածների փտած զառանցանքները լսելուց, թե՝ «մենք հաղթել ենք», հոգնել է իշխանական չինովնիկների խոսքի ու գործի 101 տոկոսանոց հակադրությունից, հոգնել է իր իրավունքների համար ամեն օր անարդյունք կռիվ տալուց՝ բազմաթիվ իշխանական աստիճանավորների անհաղթահարելի բյուրոկրատիայի դեմ. վարչապետը վերեւում խոսում է գիտելիք ունեցողին գերադասելուց՝ գիտելիքով օժտված մեր երեխաները դրսում, ներսում՝ այսուայն հզորի փսլնքոտներն են, նախագահը խոսում է արդար կառավարումից, ամենուր անարդարությունը ելել-ուտում է մեզ: Ահա ինչից է զզվել ՀՀ քաղաքացին, ու արդեն աջուձախ, հարեւաններից, ազգականներից ու տնեցիներից անգամ լսում ես, թե քո պաշտպանած պետությունն ապրելու տեղ չէ, իշխանություն եւ ընդդիմություն արժանի են իրար, գնում ենք: Իշխանությունը կամ ընդդիմությունը, իրենց այս գործելակերպով «ավերակա՞ց են թագավորելու»: Ես ո՞նց հավատամ Հովհաննես Հովհաննիսյանին, որը հենց զրկվեց ԵԽԽՎ-ում ՀՀ պատվիրակության ղեկավարի պաշտոնից՝ ընդդիմություն դարձավ, Տիգրան Թորոսյանին, որ կուրծք էր ծեծում իշխանության ամենաանհեթեթ նախաձեռնություններն անգամ որպես վերջին ճշմարտություն ներկայացնելով, բայց պաշտոնից զրկվելով՝ հինգ պակաս ընդդիմություն է: Կամ՝ որ պաշտոն ստացողն անմիջապես մոռանում է իր ընդդիմադիր հայացքները՝ արդյոք խիստ գաղափարական մեր քաղաքականների բարձր գաղափարների արդյո՞ւնք է (Ստեփան Զաքարյանը ձեզ օրինակ): Եվ ինձ՝ քաղաքական անցքերի հերթագայությունը 88-ից արմատապես իմացողիս խնդրում եմ դեմ չտալ «այս իշխանությունները կեղծել են ընտրությունները» մերկաբանությունը, քանի որ 1990-ից սկսած բոլոր, խնդրում եմ բերանները չբացել, բոլոր ընտրություններն այս կամ այն չափով եւ ամենատարբեր մեթոդներով, մասամբ կամ առարկայորեն կեղծվել են: Եվ անգամ՝ ամենաառաջին, անկախական ժամանակի Գերագույն խորհրդի ընտրություններին, երբ առաջին ՀՀՇ-ական թեկնածուները մեծ ժողովրդականություն էին վայելում, սովորույթի համաձայն էլի տրցակներով բյուլետեններ լցրեցին՝ այնուամենայնիվ ապահով լինելու համար, որ իրենք են ընտրվել, իսկ 1995-ի եւ 1996-ի ընտրությունների ողջ կեղծիքը կազմակերպած գործիչների երեսպաշտությունը պարզապես զավեշտալի է:

Թողնենք վերջապես այս տրորված, չարչրկված խոսակցությունը: Խնդիրը հիմա ազգովին արմատապես փոխվելու մեջ է. կամ վերցնում եւ բոլորս՝ իշխանություն եւ ընդդիմություն, խոստովանում ենք, թե սխալվել ենք բոլո՛րս, ամեն մեկն իր մասով, գծենք սահմանն ու ասենք, որ այս պահից իսկապես կատարելու ենք մեր ստորագրած բոլոր պայմանագրերը: Բոլորս՝ իշխանություն եւ ընդդիմություն երկրի ոչ վատ օրենքներն էլ չենք խախտելու ու այդպես երկուստեք ենք երկիրը դուրս բերելու դրսից ու ներսից անխոցելի հարթություն, կամ էլի շարունակում ենք ստել ու կեղծել. մի կողմից կուրծք ծեծել, թե «այս իշխանությունը հանցագործ է, մենք՝ սրբեր», եւ հակառակը, իշխանությունը ջայլամություն անի, որ ինքն է միակ ճշմարիտը, ու իր բոլոր իրավական ու վարչական լծակներով պետք է ճզմի ընդդիմությանը, դա էլ ոչինչ, երկրի հասարակ քաղաքացուն, առանց որի իշխանություն եւ ընդդիմություն ոչինչ չարժեն:

Հիմա ո՞րն ենք ընտրելու ԵԽԽՎ-ի տված այս նոր ժամանակի ընթացքում. վերը մեր ասածի տրամաբանությամբ՝ ընդդիմությունը, որի կողմնակիցները ոչ թե ավելացել, այլ ակնհայտորեն պակասել են նրա քաջնազարական հայտարարություններից, հե՞տ է կանգնում իր մեծապաշտական նկրտումներից, խոստովանում, որ չափազանցնում էր, թե հաղթել է ընտրություններում եւ այլեւս չի սպառնում նոր մարտիմեկյան սրացումներով: Իշխանությունն էլ (եւ հատկապես երկրի նախագահը) ընդունում է, որ իշխանությունը (իրեն նախորդած) գերազանցել է իր լիազորությունները մարտի 1-ին, ուրիշի սխալի համար ներողություն է խնդրում զոհվածների հարազատներից, հայտարարում, որ թեեւ ընդդիմությունը բարի պտուղ չէ, բայց ներում է իր մոլորյալ զավակին ու բաց թողնում բանտարկյալների մեծ մասին, ու դա էլ ընկալվում է բոլորովին էլ ոչ պարտություն կամ հետքայլ, այլ իմաստուն եւ հեռատես ընտանիքի ղեկավարի պահվածք: Կամ էլ ազգովին՝ ընդդիմություն եւ իշխանություն, ուժ չենք գտնում մեր մեջ մեր սխալներն ու գրագիտության պակասը խոստովանելու եւ շարունակում ենք գլխով հարվածել պատին, որից ի վերջո ոչ թե պատը, այլ մեր սեփական գլուխն է տուժելու: Այս դեպքում կարելի է եւ ԵԽԽՎ-ի, նրա որոշումների ու Ղարաբաղի խնդրի լուծման վրա դրանց անդրադարձի, եւ բազմաթիվ այլ անդրադարձերի վրա թքած ունենալ:

Իսկ հատկապես ԵԽԽՎ-ին, Եվրոխորհրդին եւ մնացած եվրոպաներին «թասիբի» գցող մեր «ընտրյալ» ընդդիմության խոսակցությունները կխնդրեինք մի կողմ թողնել՝ Եվրոպան առանց ձեր խորհուրդների էլ յոլա կգնա իր վարկը չկորցնելու համար՝ ուրիշի աչքի մազի մասին խոսելուց առաջ սեփական աչքի գերանի մասին մտածեք:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

---

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԵՎ ԹԱՔՑՆՈՒՄ

# Վարչապետը՝ ոսկու շուկայի իրավիճակի մասին

Մինչ կառավարության նիստի սկսվելը, երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձավ Խորենացու փողոցի ոսկու շուկայում տիրող իրավիճակին: Նա նշեց, որ ոսկու շուկայի աշխատողներից իր ստացած դիմում-բողոքում մարդիկ բողոքում են անմարդկային աշխատանքային պայմաններից՝ «ձմեռը ցուրտ է՝ ջեռուցում չկա, ամառը շոգ է՝ օդափոխություն կազմակերպված չէ, 1 քմ-ի համար վճարը ահռելի թվերի է հասնում: Հակասանիտարական վիճակ է ստեղծված, անվտանգության կանոնները չեն պահպանվում: Այդ տարածքում գործում են արտադրամասեր, արտադրություն է կազմակերպված, որն իր ծավալներով չի զիջում ոսկերչական գործարանին, այստեղ եւս օդափոխություն չկա, անվտանգության կանոնները պահպանված չեն»: Այս պայմաններում, շարունակեց վարչապետը, «ձեզ ձեռնտու չէ, մի աշխատեք» պատասխանն է տալիս աշխատողներին առեւտրի կազմակերպիչը»:

Տիգրան Սարգսյանն ընդգծեց, որ ստացած գերշահույթներն առեւտրի կազմակերպիչը թաքցնում է պետությունից եւ «հեքիաթներ է պատմում, թե պետությունն է խստացնում պահանջներն իրենց նկատմամբ: Մենք փոքր եւ միջին բիզնեսի համար պահանջները չենք խստացրել, հակառակը՝ խստացրել ենք պահանջները առեւտրի կազմակերպչի համար»: «Բեռն ամբողջությամբ մենք դնում ենք առեւտրի կազմակերպիչների վրա: Կարծում եմ, չափազանց կարեւոր է, որ այս պարզ ճշմարտությունը տեղ հասցնենք», ասաց վարչապետը: Նա տեղեկացրեց, որ շուկայից ստացված գերշահույթներով էլիտար տներ ու Ծաղկաձորում դղյակներ են կառուցվում: Մինչդեռ այդ եկամուտների մի մասը պետք է ծառայեր փոքր եւ միջին բիզնեսի հազարավոր աշխատողների համար նորմալ աշխատանքային պայմանների ստեղծմանը: Տիգրան Սարգսյանը հավաստիացրեց, որ այդ հարցում կառավարությունը հետեւողական է լինելու: **Ա. Ս.**

# Խիստ նկատողություն՝ պետական պաշտոնյային ոչ վայել վարքագծի համար

Երեկ, կառավարության հերթական նիստը սկսվեց վարչապետ Տիգրան Սարգսյանի խիստ հորդորով. «Մեր քաղաքացիներից ահազանգեր ենք ստանում, որ շատ պաշտոնատար անձինք իրենց պաշտոնը չարաշահում են: Մենք շուտով ընդունելու ենք էթիկայի կանոնագիրք եւ այդ կանոնակարգով սահմանված նորմերը պետք է լինեն պարտադիր բոլորի համար: Ովքեր իրենց չեն պատկերացնում այդ կանոնների ներքո որպես պետական ծառայող, պետք է դիմում գրեն եւ ազատվեն աշխատանքից: Կոպտությունը, բռիությունը, լկտիությունը ուժեղ ղեկավարի հատկանիշներ չեն, այլ թուլինն են: Այդպիսի վարքագիծը մեզ համար պետք է լինի անընդունելի», ասաց վարչապետը:

Ավելի ուշ՝ կառավարության մամուլի ծառայությունից ստացվեց հաղորդագրություն, որում նշված է, որ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալներ Թաթուլ Հակոբյանին եւ Աբրահամ Մանուկյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ պետական պաշտոնյային ոչ վայել վարքագիծ դրսեւորելու համար: Իսկ թե ի՞նչ էր պատահել, դեռ անցած դեկտեմբերի 27-ին, «Կակտուս» ռեստորանում, օրեր առաջ «Հայկական ժամանակին» տեղեկացրել էին, որ այդ օրը ռեստորանում, հարեւանությամբ ընտանիքներով ժամանակ էին անցկացնում էներգետիկայի նախկին նախարար Մելս Հակոբյանը, փեսան իր ընտանիքով: Հարեւան սեղանի մոտ եղել են առողջապահության երկու փոխնախարարները՝ Թաթուլ Հակոբյանն ու Աբրահամ Մանուկյանը: Վերջիններս գինովցած սկսել են բարձրաձայն հայհոյել: Մ. Հակոբյանը մոտեցել է եւ խնդրել չհայհոյել: Հենց այդ պահին էլ ծագել է վեճ, որը հետո տեղափոխվել է փողոց ու վերածվել ծեծկռտուքի: Արդյունքում Մելս Հակոբյանը եւ իր փեսան ստանում են մարմնական վնասվածքներ ու տեղափոխվում հիվանդանոց: Իսկ երկու փոխնախարարներին տանում են ոստիկանության կենտրոնի բաժանմունք: Որոշ պարզաբանումներից հետո փոխնախարարներին բաց են թողնում: 2009-ի հունվարի 2-ին ոստիկանությունում հարուցվում է քրեական գործ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Կալանված պատգամավորներին այցելել են Ազգային ժողովից

Երեկ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի հանձնարարությամբ ԱԺ աշխատակազմի ղեկավար Գեղամ Ղարիբջանյանը եւ ԱԺ նախագահի գլխավոր խորհրդական Վիկտոր Մնացականյանը այցելել են կալանված պատգամավորներ Մյասնիկ Մալխասյանին, Սասուն Միքայելյանին եւ Հակոբ Հակոբյանին: Վերջիններս ավելի վաղ նամակով դիմել էին ԱԺ նախագահին՝ խնդրելով արտահերթ նիստ հրավիրել իրենց եւ գլխավոր դատախազի մասնակցությամբ, քանի որ համոզմունք ունեն, որ գլխավոր դատախազը չի հիմնավորել իրենց մեղքը: Այդ նիստում նրանք պահանջելու են գլխավոր դատախազից իրենց մեղքը հիմնավորող ապացույցներ բերել: Այցելուները պատգամավորների հետ զրույցում նշել են, թե սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն, արտահերթ նիստ կամ նստաշրջան գումարում է ԱԺ նախագահը՝ երկրի նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կամ կառավարության նախաձեռնությամբ, բացի այդ նրանց կալանավորելուց հետո քրեական գործի ընթացքը համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենքով սահմանված կարգին, գործը գտնվում է դատաքննության փուլում, եւ քննությունը պետք է իրականանա դատավարության օրենսդրական նորմերին համապատասխան: Միաժամանակ Գ. Ղարիբջանյանը պատգամավորներին տեղեկացրել է, որ քրեական օրենսգրքի 225 եւ 300 հոդվածներում փոփոխություններ եւ լրացումներ առաջարկելու համար ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որին հանձնարարված է առաջարկների ժամանակ հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի չափանիշները: Այցելուները հետաքրքրվել են նաեւ պատգամավորների առողջությամբ եւ կեցությամբ: **Ս. Խ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 1/29/2009 8:46 PM Page 1



# 2009-ին նախատեսվում են նոր սակագնային առաջարկներ եւ նոր ծառայություններ

## *Ռալֆ Յիրիկյանն անդրադարձավ «Վիվասել ՄՏՍ»-ի գործունեության ու ծրագրերին*

Հայաստանի առաջատար բջջային կապի օպերատոր «Վիվասել ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** եւ ՄՏՍ-ի փոխնախագահ **Օլեգ Ռասպոպովը** երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձան ընկերության 2008-ի գործունեության արդյունքներին եւ 2009-ի ծրագրերին:




Անդրադառնալով «Վիվասել ՄՏՍ»-ի 2008-ի գործունեությանը, Ռալֆ Յիրիկյանը հայտնեց, որ անցյալ տարի հիմնականում ավարտվել է ինտեգրումը մայր ընկերությանը, բաժանորդների թիվը 1 տարվա ընթացքում ավելացել է հասնելով 2 մլն 17 հազարի, կառուցվել են 750 բազային կայաններ եւ 3-րդ սերնդի 40 բազային կայաններ Երեւանում եւ Գյումրիում: Ըստ Ռալֆ Յիրիկյանի, 3-րդ սերնդի կամ 3G բջջային կապը հավանաբար կներդրվի այս տարվա առաջին կիսամյակի վերջում, երկրորդի սկզբում՝ Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում, բայց մինչ այդ պետք է հստակ լինի, որ այն պատրաստ է գործարկման:

100 կմ օպտիկական մալուխային ցանց է 2008-ին կառուցվել տվյալների փոխանակման համար: Սրա նպատակը նախ ընկերության գործունեության համար անհրաժեշտ տվյալների փոխանակման սեփական ցանց ունենալն է, իսկ հետո նաեւ՝ ինտերնետ մատակարարելը: Տարվա ընթացքում առաջարկվել են սակագնային տարբեր փաթեթներ: Խոսելով բաժանորդների թվի մասին, «Վիվասել ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը նշեց, որ 2007-ի վերջին ունեցել էր 1,3 մլն բաժանորդ: Ներկայումս շուկայում «Վիվասել ՄՏՍ»-ի մասնաբաժինը կազմել է 78 տոկոս՝ 1 տարի առաջ եղած 73 տոկոսի համեմատ: Գլխավոր տնօրենը հայտնեց, որ այս տարի նույնպես ձգտելու են պահպանել այս բաժինը շուկայում եւ առաջատարի դիրքերը:

Ընդլայնվել են «Վիվասել ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոնները՝ հասնելով 95-ի, որից 13-ը շարժական կենտրոններ են գյուղերի համար: Ընկերությունն ունի 375 ռոումինգ գործընկերներ աշխարհի 173 երկրներում եւ դեռ չի օգտվում մայր ընկերության 540 ռոումինգ գործընկերներից: «Վիվասել ՄՏՍ»-ում աշխատում են 1200 մարդ, որոնց միջին տարիքը 30-ն է, աշխատողների մեջ կան 29 հաշմանդամներ: Ռալֆ Յիրիկյանը նաեւ անդրադարձավ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ընկերության քաղաքականությանը, ասելով, որ պարտավորություն է համարում ստացված եկամուտների մի մասը կիսել հասարակության հետ: 2008-ի համար նախատեսված է եղել կատարել 65 մլն դոլարի ներդրում, եւ ՄՏՍ խմբի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունների ամփոփումից հետո կերեւա, թե որքանն է հաջողվել կատարել: Նշվեց նաեւ, որ «Վիվասել ՄՏՍ»-ն 2008-ին Հայաստանի թիվ 1 հարկատուն է՝ ավելի քան 30 մլրդ դրամ հարկային վճարումներով:

2009-ին նախատեսվում է իրականացնել 95 մլն դոլարի ներդրում ցանցի ընդլայնման եւ ունակությունների ավելացման նպատակով: Ընկերությունը նախապատրաստվում է ավելի ուժեղ մրցակցության, քանի որ Հայաստանի բջջային կապի շուկա մուտք է գործելու նոր օպերատոր: Նախատեսվում են նաեւ նոր սակագնային առաջարկներ, նոր ծառայություններ: «Վիվասել ՄՏՍ»-ն այս տարի նախատեսում է գործարկել նոր 098 կոդը: Վերանվանումը (ռեբրենդինգ), նախնական պլաններով, դեռ տեղի չի ունենա: Ընկերությունը կշարունակի կորպորատիվ սոցիալական ծրագրերը 3 ուղղություններով՝ աջակցություն երեխաներին, մշակույթին եւ գործընկերություն սպորտի հետ:

«Աշխատակազմի կրճատումներ հնարավո՞ր են, նկատի ունենալով միջազգային տնտեսական ճգնաժամը» հարցի առնչությամբ Ռալֆ Յիրիկյանը պատասխանեց, որ աշխատակազմի ավելացում չի լինելու եւ կրճատումներ էլ չեն լինելու: Նա նշեց, որ ընկերության ամենակարեւոր արժեքը աշխատակազմն է:

Ճգնաժամի առնչությամբ տրված հարցին ՄՏՍ-ի փոխնախագահ Օլեգ Ռասպոպովը պատասխանեց, որ ընկերությունը չի նախատեսում կրճատել ներդրումներն ընդհանրապես եւ մասնավորապես նաեւ Հայաստանում, ավելացնելով, որ բոլոր նախատեսված ծրագրերը կկատարվեն:

«**Ազգի**» հարցին, թե ե՞րբ «Վիվասել ՄՏՍ»-ի կապը հասանելի կլինի նաեւ մետրոյում, Ռալֆ Յիրիկյանը պատասխանեց, որ այս տարի դա հնարավոր կլինի, արդեն ստացել են թույլտվությունները դրա համար եւ ներկրվում են անհրաժեշտ սարքավորումները:

«Ինչպե՞ս է գնահատում «Վիվասել ՄՏՍ»-ի գործունեությունը մայր ընկերությունը» հարցին, ՄՏՍ-ի փոխնախագահ Օլեգ Ռասպոպովը պատասխանեց, որ ամբողջությամբ բավարարված են «Վիվասել ՄՏՍ»-ի՝ մայր ընկերության հետ ինտեգրման, ծառայությունների մատուցման եւ որակի, նոր սակագնային առաջարկների եւ գործունեության մնացած բոլոր ուղղություններից:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ինչպես են համագործակցելու պետությունն ու մասնավորը

Հայաստանում պետության եւ մասնավոր հատվածի համագործակցության երեկ կառավարության հաստատած հայեցակարգը լրագրողներին ներկայացրեց էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանը**: Նա նշեց, որ էկոնոմիկայի նախարարությունը պետք է ստեղծի նշված հայեցակարգով սահմանված միջոցառումներն իրականացնող առանձին կառույց, որի կանոնադրության նախագիծը եւ հոգաբարձուների խորհրդի կազմը պետք է ներկայացվեն եռամսյա ժամկետում:

Պետություն-մասնավոր համագործակցության հայեցակարգով, պետությունը որպես մասնակից կողմ, աջակցելու է տնտեսության որոշ ոլորտներում ռիսկերի նվազեցմանը, այդ ոլորտներում մասնավորի համար գործունեությունն առավել գրավիչ եւ դյուրին դարձնելով: Ըստ Արա Պետրոսյանի, նման համագործակցության օրինակներ կան, բայց դրանք դեռ ցանկալի մակարդակի վրա չեն, ուստի անհրաժեշտ է այդ համագործակցությունը հնարավորինս «ինստիտուցիոնալացնել»: Այս հայեցակարգի մշակման ժամանակ լրջորեն հաշվի է առնվել միջազգային փորձը: Որպես պետություն-մասնավոր համագործակցության մոդելներ են դիտարկվել հավատարմագրային կառավարումը, վարձակալությունը, լիզինգը, զրոյական պայմաններում ենթակառուցվածքների ստեղծման նախագծերի իրականացումը: Փոխնախարարի կարծիքով, դա կբերի պետական ծախսերի կրճատման, տարածքային համաչափ զարգացման, ֆինանսների առավել արդյունավետ ծախսման եւ երկարաժամկետ հեռանկարում՝ զարգացման ապահովման:

Արա Պետրոսյանը նշեց, որ այս հայեցակարգը կդառնա մի խողովակ, որով կանցնեն եւ կիստակեցվեն պետական եւ մասնավոր համագործակցությամբ իրականացվելիք ծրագրերը: Փաստորեն, կստեղծվի «համագործակցային «եռանկյունի»՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների, ստեղծվելիք այս կառույցի եւ վարչապետին կից ստեղծված՝ փոքր եւ միջին ձեռնարկություններին աջակցության օպերատիվ շտաբի միջեւ: Պետական որոշակի ներդրումներով եւ մասնավորի միջոցներով կիրականացվեն խոշոր ծրագրեր»: Փոխնախարարն ավելացրեց, որ համագործակցության առավել լայն հեռանկարներ կան էներգետիկայի, տրանսպորտի, հեռահաղորդակցության, ինչպես նաեւ կրթության, առողջապահության եւ տուրիզմի ոլորտներում:

**Ա. Մ.**



# ԵԽԽՎ-ն առաջարկում է վերանայել, մինչդեռ Ռուսաստանը զարգացնում է հարաբերությունները Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ

**Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը երեկ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանային օրակարգի քննարկվող հարցերից էր, որ Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում ավելի զգալի էր Ֆրանսիայի տրանսպորտային համակարգի աշխատակիցների գործադուլի դրսեւորումների տեսքով, քան վեհաժողովի պատվիրակների տարբեր ելույթների մակարդակով:**

**Պատմական Ալզասի նահանգի գերմանական իրականություն հիշեցնող ֆրանսիական փոքրիկ քաղաքի փողոցներում ակտիվ երթեւեկությունը հասարակական տրանսպորտի առումով, որ հայաստանյան «խելացիության» դրսեւորումների հետեւանքով սահմանափակվել է անդուր ու անճոռնի ավտոբուսիկներով ու երթուղայիններով, հասուկենտ տրամվայներով էր կենդանանում: Իսկ վեհաժողովի պատերից ներս պատվիրակները շարունակում էին խոսել այնպիսի բարձր ու բարդ հասկացությունների շրջանակներում, որոնք շարքային տրանսպորտայիններին հասցե չեն հետաքրքրի:**

**Մինչդեռ հունվարի 28-ին ԵԽԽՎ քննարկումները շատ ավելի թեժ էին, որ սակայն էլի զերծ չէին տրանսպորտային հարցերից այն առումով, որ այդօրինակ գործադուլներ էին անցկացվում նաեւ Գերմանիայում եւ Հունաստանում: Վեհաժողովում թեժությունը վերաբերում էր Ռուսաստան-Վրաստան պատերազմի հետեւանքներին վերաբերող բանաձեւի կատարմանը, որի առնչությամբ հերթագրված ելույթների թիվը մոտ 70 էր, իսկ բանաձեւում առաջարկված փոփոխությունները՝ ավելի քան 80:**

**Հիմնական դրույթը, որի առնչությամբ Ռուսաստանի պահվածքը նախապես՝ դեռեւս նստաշրջանի բացման օրը որպես փակուղային էր որակել ԵԽԽՎ նախագահ Լուիս Մարիա դե Պուչը, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի՝ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի ճանաչման որոշման հետ է կապված այն մոտեցմամբ, որ ԵԽԽՎ-ն դեռեւս աշնանային նստաշրջանում ընդունել էր բանաձեւ՝ առաջարկելով վերանայել այդ որոշումը:**

**Չորեքշաբթի վեհաժողովի քննարկումներում բազմիցս նշվել է, որ Ռուսաստանը չի կատարել բանաձեւի դրույթները, Վրաստանն էլ՝ ոչ ամբողջությամբ: Իսկ բարձրաձայնումները, թե ԵԽԽՎ-ում ռուսաստանյան պատվիրակությանը պետք է զրկել ձայնի իրավունքից, անգամ որոշ դեպքերում՝ նաեւ վրացական պատվիրակությանը, ապա այդ առնչությամբ մթնոլորտը վեհաժողովում արդեն անլուրջ կարելի էր ընկալել այն տրամաբանությամբ, որ ձայնի իրավունքից զրկելը ընկալվում է որպես այդքան հաճախակի կիրառելի գործիք:**

**Ինչեւէ, Ռուսաստանին կզրկեն ձայնի իրավունքից, թե չեն զրկի՝ այդ երկրի պատվիրակությանն անգամ չէր հետաքրքրում ու չի էլ հետաքրքրել, եւ բնականաբար նման բան տեղի չունեցավ: Նոր բանաձեւում պահպանվեց միայն ԵԽԽՎ-ի առաջարկը՝ վերանայելու Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ճանաչման որոշումը, մինչդեռ Ռուսաստան-Աբխազիա եւ Ռուսաստան-Հարավային Օսիա հարաբերությունները գնալով զարգանում ու խորանում են, այլ ոչ թե ճանաչման հարցի վերանայման հնարավորություն թողնում:**

**Հետաքրքրական կլինի տեսնել վեհաժողովականների արձագանքը, եթե Եվրոպայի խորհրդի անդամ որեւէ այլ երկիր, բացի Ռուսաստանից, նման քայլ կատարի ու հատուկ ատեսվ չի ունենա գազային այն պաշարները ու եվրոպական երկրների դրանից կախվածությունը, որ առկա է Ռուսաստանի պարագայում: Թեեւ պետք է Ռուսաստանի պարագայում ընդունել, որ միայն գազը չէ, որ այդ երկրի հանդեպ լոյալության պայմաններ է թելադրում թեկուզ այսօրինակ հարցերում:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ**

# Պետք չէ հասկանալ ադրբեջաներեն, որ հասկանաս, թե ինչի մասին են «երգում»

*1-ին էջից*

**Այս հայտարարությունը ստորագրած պատվիրակները «դատապարտում են այս հանցանքները եւ կոչ անում Եվրոպայի խորհրդին ու անդամ երկրներին համապատասխան ճնշման մեխանիզմներ կիրառել Հայաստանի հանդեպ՝ ճանաչելու նշված արտաքսյալներին իրենց հայրենիքում»: Վերջինի առնչությամբ նկատի ունեն Հայաստանը: Ի դեպ, ստորագրությունների աշխարհագրությունն էլ է բավականին հետաքրքրական. 9 պատգամավոր՝ Թուրքիայից, 2-ական՝ Ադրբեջանից, Բուլղարիայից եւ Ալբանիայից, 1-ական՝ բալթյան երկրներից, Գերմանիայից եւ Միացյալ Թագավորությունից:**

## Ատելությանը վերջ տալու կոչ Ադրբեջանին

**«Անհանդուրժող եւ ատելությամբ լի ելույթներ Ադրբեջանում» հայտարարությունը երեկ հրապարակվեց ԵԽԽՎ-ում արդեն որպես հայկական պատվիրակության նախաձեռնություն, որը ստորագրել էր 26 ԵԽԽՎ-ական պատվիրակ: Հայտարարության մեջ նշվում է, որ Եվրոպայի խորհուրդը չլուծված հակամարտությունների հարցում շարունակում է կողմ լինել հաշտեցմանը եւ քաղաքական լուծումներին, միջազգային հանրությունն էլ շարունակում է զգալի ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատեւ ու բանակցված խաղաղության ու հաշտեցման հասնելու համար:**

**Որոշակի բնակչության դեմ ուղղված ատելությամբ լի արտահայտությունների գերակշռությամբ ելույթները սրընթաց գործոն են, բռնության պայման՝ ոճրագործությունների, այդ թվում նաեւ ցեղասպանության իրականացման համար:**

**«...Ադրբեջանական իշխանությունները շարունակաբար դրդում, քաջալերում եւ հանդուրժում են Հայաստանի, հայ ժողովրդի ու հայկական ծագում ունեցող անձանց դեմ անհանդուրժող ու ատելությամբ լի ելույթները՝ նաեւ լրատվամիջոցների ակտիվ ներդրմամբ», նշվում է հայտարարության մեջ, հավելմամբ, որ այդ ամենը տեղի ունի, չնայած բազմաթիվ միջազգային հեղինակավոր կառույցներ իրենց լուրջ մտահոգությունն են արտահայտել Ադրբեջանում անհանդուրժողականության եւ ատելության դրդող նման ելույթների առնչությամբ:**

**Հայտարարությունը ստորագրած պատվիրակները քաջալերում են Ադրբեջանի կառավարությանը առանց հետաձգման վերջ տալ իրենց՝ Հայաստանի, հայ ժողովրդի ու հայկական ծագում ունեցող անձանց դեմ անհանդուրժողականության ցույցերի ու ատելության ելույթների քաղաքականությանն ու գործողություններին: «Մենք կոչ ենք անում վեհաժողովի շրջանակներում մոնիտորինգի մեխանիզմներով հատուկ ուշադրություն դարձնել այս հարցին եւ հայտնաբերումները ներառել հաջորդող զեկույցներում»:**

**ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության նախաձեռնած հայտարարությունը ստորագրել են 26 պատվիրակ, որոնցից 6-ը՝ Հայաստանից, 5-ը՝ Ֆրանսիայից, 3-ը՝ Իտալիայից եւ մեկական՝ Միացյալ Թագավորությունից, Լյուքսեմբուրգից, Հունգարիայից, Նորվեգիայից, Էստոնիայից, Չեխիայից, Կիպրոսից, Մոնակոյից, Շվեյցարիայից, Բոսնիա-Հերցեգովինայից, Ուկրաինայից:**

# Կրքեր «Լույս» հիմնադրամի տնօրենի ընտրության շուրջը

«Լույս» հիմնադրամի կրթական ծրագրով, որին մեր թերթը բազմիցս է անդրադարձել, պետք է ֆինանսավորվեն արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող բուհերում սովորող հայ ուսանողները: Հիմնադրամը կրթաթոշակներ է տրամադրելու այդ հաստատություններում սովորող ՀՀ քաղաքացի եւ սփյուռքահայ ուսանողներին: Հիշեցնենք, որ «Լույսի» միջոցները հայթայթվում են հիմնականում մասնավոր նվիրատվություններից, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը Սերժ Սարգսյանն է, խորհրդի կազմում է նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը անցած տարվա նոյեմբերին մրցույթ էր հայտարարել հիմնադրամի կրթական ծրագրերի տնօրենի թափուր հաստիքի համար: Այդ պահից եւ դրանից էլ առաջ մեր մամուլում հիմնադրամի եւ ապագա գործադիր տնօրենի անելիքներին ուղղված նյութերի մի այնպիսի առատություն էր, այնպիսի լոբբինգ՝ գործադիր տնօրենի թափուր հաստիքի համար դիմած որոշ անձանց կողմից, որ դա այլ կերպ, քան ճնշում մրցույթի ընթացակարգի վրա, չես անվանի: Վարչապետ Տիգրան Սարգսյանը անցած տարվա նոյեմբերի 27-ին կառավարության նիստում, անդրադառնալով երկրի նախագահի այս նախաձեռնությանը, ասել էր, թե ծրագիրը փայլուն ապագա ունի, եւ նշել, որ դրա գործարկումից տարիներ հետո «մենք ձեզ հետ հիանալու ենք տաղանդաշատ երիտասարդների նվաճումներով» ու տեղեկացրել, որ «Լույսի» գործադիր տնօրենի մրցույթի մասին տեղեկությունը տեղադրված է www. careercenter.am, www. career.am, www. armeniadiaspora.com կայքերում, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, նաեւ կառավարության կայքէջում. այս տեղեկությունը վարչապետը տվել էր հենց նկատի ունենալով մամուլային այն պնդումները, թե մրցույթի մասին հնարավոր չէ լրատվություն ստանալ: Բացի այդ, նա ասել էր, որ մրցույթի ժամկետը երկարաձգվել է հենց թափանցիկություն ապահովելու համար, քանի որ հարկ է ընտրել այն լավագույն մասնագետին, ով նաեւ միջազգային փորձ կունենա եւ կհամագործակցի աշխարհի հայտնի համալսարանների հետ, իսկ մրցույթին հայտ ներկայացրածների նախնական ընտրությամբ (առաջին փուլ) զբաղվելու են ոլորտի գիտակներ Վիգեն Սարգսյանը, Վաչե Գաբրիելյանը, Սպարտակ Սեյրանյանը, Անահիտ Բախշյանը, Մեսրոպ քահանա Արամյանը, ովքեր նաեւ հանրության վստահությունն են վայելում:

Մի խոսքով, նախնական փուլի ընտրությամբ եւ երկրորդ փուլ անցած 4 թեկնածուներից վերոհիշյալ 5 հանձնաժողովականների միաձայն ընտրությամբ հիմնադրամի կրթական ծրագիրն արդեն գործադիր տնօրեն ունի՝ մեր սփյուռքահայ հայրենակցուհի Ժակլին Կարաասլանյանն է: Նրան ամենաբարձր բալային միավորներով ընտրել է վերը նշված հեղինակավոր խորհուրդը, իսկ մրցույթի նախնական փուլում տնօրենի թափուր հաստիքին հավակնել են 180 մարդ:

Ժակլինը ծնվել է Երեւանում, կրթություն ստացել Ֆրանսիայում՝ մասնագիտանալով օտար լեզուներում, եղել է Փարիզի «Մոնրիալ» կենտրոնի ծրագրերից մեկի համակարգողը՝ ողջ աշխարհով կրթական եւ տեխնոլոգիական ծրագրեր իրականացնելով: Այնուհետեւ դարձել է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի «Կրթական ապագա» խմբի հատուկ նախագծերի ղեկավարը: Ուր էլ աշխատել է՝ իր երկարամյա աշխատանքային պրակտիկայում մշտապես եղել է կրթական նոր, ժամանակակից մոդելների մշակման եւ ներդրման իրականացնող- քարոզող: Նա տիրապետում է անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն լեզուներին՝ բացի հայերենից, մասամբ՝ գերմաներենին, եւ փաստորեն 1981-ից մինչեւ այժմ միջազգային կրթական ծրագրերում աշխատելու մեծ փորձ ունի: Նա այժմ թողնում է իր լավ վարձատրվող աշխատանքն ամերիկյան ընկերությունում եւ տեղափոխվում Հայաստան՝ «Լույս» հիմնադրամի տնօրենի պաշտոնը ստանձնելու: Մի քանի օր առաջ, երբ Ժակլինի թեկնածությունը ներկայացվում էր հաստատման, մամուլում էլի տպագրվեցին այս կրթական ծրագրերի թափանցիկությունը կասկածի տակ դնող նյութեր, որոնք ենթատեքստով նաեւ ուղղված էին նոր տնօրենի թեկնածության դեմ, մինչդեռ անգամ Անահիտ Բախշյանն է վկայել, այդ թվում՝ մամուլի մակարդակով, որ տնօրենն ընտրվել է շատ բարձր բալերով:

Ասենք, որ ի սկզբանե հիմնադրամի գաղափարի հեղինակը եղել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Արթուր Իշխանյանը, որի նախաձեռնության հիման վրա էլ ի վերջո միս ու արյուն է ստացել այս գաղափարը՝ փառք ու պատիվ նրան: Սակայն դեռ գաղափարի գործարկումը չսկսած՝ հենց նա էլ հարցազրույցներով ու ակտիվորեն մամուլին մեկնաբանություններ տալով խաչակրաց արշավանք է սկսել նախաձեռնության իրագործման դեմ, քանի որ գաղափարն իրենը լինելու պարագայում հավանաբար նախապես հավակնել է, թե ծրագրի գործադիր տնօրենն ինքը պետք է լինի: Էլ գործունեության թափանցիկության պակաս, էլ շեղումներ նախնական ծրագրից, էլ հիմնադրամի կրթական ծրագրերի գլխավոր տնօրենի ընտրության մութ շղարշ, էլ Ջիվան Գասպարյանի 80-ամյակի վրա ծախսված հիմնադրամի միջոցներ: Մամուլային այս մեկնաբանությունները հավանաբար առանց նրա ջանքերի չեն եղել:

Արթուր Իշխանյանը, որը նույնպես դիմել էր տնօրենի թափուր հաստիքի համար, վերոհիշյալ 4-ի հետ չի անցել երկրորդ փուլ, անմիջապես մամուլում սկսել է կասկածներ հայտնել այդ մրցույթի վերաբերյալ: Արթուր Իշխանյանը հայտնի եւ հարգված գիտնական է, այս ծրագիրն էլ նրա ծրագիրն է, բայց դա հո չի՞ կարող նշանակել, որ պետական նշանակության ծրագրի տնօրենի համար մրցույթ չի հայտարարվելու եւ կառավարման որակներ ու համապատասխան հմտություններ ունեցող ամենալավ թեկնածուն չի ընտրվելու: Ժակլին Կարաասլանյանն իր դիմում-հայտի հետ ներկայացրել է բազմաթիվ (մոտ 30) միջազգային կառույցների երաշխավորագրեր: Ա. Իշխանյանը եւս երաշխավորագրեր է ներկայացրել, այդ թվում՝ իր ուսանողների ստորագրահավաքի փաստաթուղթը հօգուտ նրա տնօրեն լինելու, սա որպես մտորելու նյութ: Բայց այսու՝ հենց Ա. Իշխանյանը, կարծում ենք, ուրախ կլինի, որ ծրագիրն իրականացնելու է այնպիսի հմուտ, միջազգային համալսարանների հետ աշխատելու փորձ եւ լեզուներ իմացող Ժակլին Կարաասլանյանը, ում ճանաչում են կրթության միջազգային ասպարեզում: Ժակլինն այժմ հավաքում է իրերը, որ ժամանի Հայաստան: Կգա, կաշխատի, գուցե հենց Արթուր Իշխանյանը նրան շնորհակալ լինի՝ իր գաղափարը լավագույնս իրագործելու համար, չէ՞ որ ժամանակին հենց ինքն էր ասում. այս ծրագրի իրականացման բոլոր օղակներում սփյուռքի ներգրավմամբ նվազեցնում ենք կոռուպցիոն ռիսկերը, եւ բացի այդ՝ դա մակարդակ է հաղորդում ծրագրին: Այս ընտրությամբ նաեւ իր խորհուրդն է իրականացվել, եւ ի վերջո իր երազանքն է իրականանալու՝ առաջադեմ երիտասարդ մասնագետներ կմղվեն առաջ, որպես երկրի գիտության եւ տնտեսության շարժիչ ուժ, կդառնան մրցունակ՝ համաշխարհային շուկայի մակարդակով: Բայց գործը դեռ չսկսած՝ չարժե խանգարել, ինչ է թե գործադիր տնօրենի ընտրության պարագան սրտովդ չէ կամ հենց ինքդ չես նախագծի տնօրենը, եւ կանխավ ոչ բարեհաճ վերաբերմունք ստեղծել: Ինչո՞ւ Ժակլինը եւ ոչ Արթուր Իշխանյանը. այսպիսի հարցադրում ընդհանրապես չէր կարող լինել, քանի որ մրցույթ է, եւ հաստատապես երկրորդ փուլում նայել են ոչ թե մարդու հայտնի գիտնական լինելուն, այլ ոլորտի կառավարման փորձին ու հմտությանը, լեզուների իմացությանը, միջազգային աշխատանքի փորձին եւ բազմաթիվ այլ պարամետրերի, հարգված 5 մարդ բալեր է տվել զուտ մասնագիտական հայացքով: Այնպես որ մամուլի աժիոտաժը կոնկրետ գոնե տնօրենի ընտրության մասով լրիվ անիմաստ է եւ տարբեր հետաքրքրությունների հետեւանք: Ի վերջո Ա. Իշխանյանը, որպես հարգված գիտնական եւ նախագծի հեղինակ, իր բոլոր մտահոգությունները կարող է ներկայացնել արդեն ընտրված տնօրենին, իսկ հետագայում, երբ կրթական այս ծրագիրն աշխատի, հետեւել ընթացքին եւ ահա այդ ժամանակ մասնանշել թերությունները: Դա էլ կօգնի տնօրենին առավել ձգված աշխատել: Իսկ որ բազմաթիվ մտահոգություններ, հարցականներ, տեղեկատվության պակաս առկա են՝ չենք կասկածում, ու դրանք կամաց-կամաց պիտի լույս ստանան տնօրենի՝ աշխատանքային պարտականությունները ստանձնելուց հետո: Ի վերջո հիմնադրամ է ստեղծվել, որ լուրջ գործունեություն պետք է իրականացնի, եւ գործունեությունը չսկսած՝ ամիսներ շարունակ նրա հանդեպ մամուլում կասկածամտություն սերմանելը գաղափարի իրագործման լավագույն ձեւը չէ:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# 300 խոշոր հարկատուներն՝ ըստ ոլորտների

2008-ի 300 խոշոր հարկատուների ցանկի («**Ազգ**», 27 հունվարի, 2009) առաջատարներին եւ առավել հայտնի գործարարներին պատկանող ընկերությունների վճարած հարկերին անդրադարձել ենք: Այժմ ներկայացնենք այլ հետաքրքրական մանրամասներ հիշյալ ցանկի մյուս հարկատուներից:

Ավտոմեքենաներ ներկրող ընկերություններից շատերն ընդգրկված են այս ցանկում, ինչն, ի դեպ, որոշ առումով նաեւ ցույց է տալիս, թե որ ավտոմեքենաներն են ավելի շատ վաճառվում Հայաստանում: 18-րդ տեղում «Տոյոտա Երեւանն» է 2,9 մլրդ դրամով, 2007-ի 1,4 մլրդ դրամի եւ 41-րդ տեղի փոխարեն, 23-րդում դարձյալ ճապոնական մեքենաներ («Նիսսան») ներմուծող «Մուրանը»՝ 2,4 մլրդ դրամ վճարած հարկերով: 2007-ին այս ընկերությունը վճարել էր 1,6 մլրդ դրամ եւ 29-րդն էր: Երրորդ խոշոր ավտոմեքենաներ ներմուծողը «Կարկոմավտոն» է 1,9 մլրդ դրամ վճարած գումարով: Այս ընկերությունն էլ 2007-ին 24-րդն էր՝ 1,8 մլրդ դրամով: Խոշոր հարկատուների ցանկում են նաեւ ավտոմեքենաներ ներկրող մի շարք այլ ընկերություններ՝ «Գլոբալ մոթորսը», «Մագաս ինվեստը» (հարավկորեական «Հյունդայի» մեքենաներ ներմուծողը, որը կրկնապատկել է իր վճարած հարկերն այս տարի՝ հասցնելով 940 մլն դրամի), «Արմենիա լադան», «Արարատ մոթորսը» եւ ուրիշներ:

Առավել հետաքրքրական են սննդամթերք ներմուծողների ցուցանիշները: Խոշոր ներմուծողներից «Սարգիս Կարոլինան» 41-րդն է 1,8 մլրդ դրամով, «Սովռանոն» 45-րդն է՝ 1,6 մլրդ դրամով, «Մոկոնաթը» 1,6 մլրդ դրամով 46-րդն է, «Վալեստան» 51-րդն է՝ 1,5 մլրդ դրամով, «Դերժավա Մ»-ն 65-րդն է՝ 1,1 մլրդ դրամով, «Քեթրին գրուպը» 69-րդը՝ 1,1 մլրդ դրամով, «Ապեյրոն» 71-րդը՝ 1,1 մլրդ դրամով, «Սլավ գրուպը» 101-րդը՝ 742 մլն դրամով: Սրանք ալյուր, կարագ, ձեթ, քաղցրավենիք, բրինձ, ոգելից խմիչք ներմուծող ընկերություններն են, որոնք հիմնականում նկատելիորեն ավելացրել են իրենց վճարած հարկերը 2007-ի համեմատությամբ: Սակայն անցյալ տարվա ընթացքում արձանագրվել էր բարձր գնաճ, ինչը որոշակիորեն մեծացրել էր նաեւ այս ընկերությունների վճարած հարկերի մեծությունները: Նշենք նաեւ, որ նախկինում այս ցանկում եղած այլ խոշոր ներմուծողներ, ինչպես, օրինակ, «Մակրո Երեւանը» կամ «Դոոս ինտերնեյշնլը», բացակայում են ցանկից:

Հանքարդյունաբերության եւ մետաղամշակման ձեռնարկությունների մի մասը, ինչպես արդեն նշել ենք, իրենց վրա կրելով միջազգային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, անցյալ տարի ավելի քիչ հարկեր են վճարել: Մասնավորապես, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը 42-րդ տեղում է եւ վճարել է 1,8 մլրդ դրամ, նախորդող տարվա 2,2 մլրդ դրամի փոխարեն, «Դինո գոլդ մայնինգը» (Կապանի կոմբինատը) 59-րդն է՝ 1,3 մլրդ դրամով, 2007-ի 1,5 մլրդ դրամի փոխարեն: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» հարկային վճարումների կրկնակի նվազման մասին արդեն գրել ենք: Սակայն, օրինակ, «Մաքուր երկաթի գործարանը» 2007-ի 40-րդ տեղի եւ 1,4 մլրդ դրամի փոխարեն 2008-ին վճարել է 3,3 մլրդ դրամ, բարձրանալով 15-րդ հորիզոնական:

Որ ֆինանսական ճգնաժամը չանդրադարձավ հայկական բանկային համակարգի վրա, վկայում է նրանց վճարած հարկերի ավելացումն անցյալ տարի: Ամենախոշոր հարկատու բանկը 2008-ին «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկն» է եղել: Այն զբաղեցնում է 28-րդ տեղը եւ վճարել է 2,2 մլրդ դրամ, հաջորդը «Արդշինինվեստբանկն» է, որը 32-րդն է 2,1 մլրդ դրամ վճարած հարկերով: Սակայն, օրինակ, երրորդ խոշոր հարկատու բանկ «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստանը» 52-րդ հորիզոնականում է եւ 1,5 մլրդ դրամ վճարումներով մոտ 100 մլն դրամով քիչ հարկեր է վճարել 2007-ի համեմատ:

Տոնավաճառներից խոշոր հարկատուների ցանկում ընդգրկվել են «Հայրապետյան եղբայրներ Հայաստան առեւտրի կենտրոնը», որը զբաղեցրել է 93-րդ տեղը, վճարելով 829 մլն դրամ, «Ռաֆայել Տաթեւը» (Մալաթիայի տոնավաճառ)՝ 608 մլն դրամ եւ 128-րդ տեղ, «Հրազդան մարզահամալիր վարձակալական ձեռնարկությունը»՝ 561 մլն դրամ եւ 139-րդ հորիզոնական, «Նարեկը» («Այրարատ» կ/թ տոնավաճառը)՝ 298 մլն դրամ եւ 254-րդ տեղ եւ «Տաշիր ինվեստ»՝ 299-րդ տեղ՝ 262 մլն դրամով: Թվարկածներից կտրուկ՝ ավելի քան կրկնակի, հարկային վճարումներն ավելացրել է «Հայաստան առեւտրի կենտրոնը», փոքր չափով՝ մյուսները: Ցանկից բացակայում են «Սուրմալուն», «Փեթակը» եւ մի շարք այլ տոնավաճառներ: Հարկ է նշել, որ չնայած տոնավաճառներից հարկային մուտքերի ավելացմանը, ստվերի շրջանառությունը շարունակում է մեծ մնալ, որը պարզելու համար ՀԴՄ-ների տեղադրումն այստեղ անհրաժեշտություն է եւ այն էլ ուշացած:

Տեղական արտադրողների մեծ մասը նույնպես գտնվում է 300 խոշոր հարկատուների ցանկում: Դրանց մեջ գերակշռում են սննդարդյունաբերության ձեռնարկությունները. «Գրանդ քենդի», «Երեւանի կոնյակի գործարան», «Կոկա կոլա հելլենիկ բոթլինգ Արմենիա», «Ավշարի գինու գործարան», «Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատը», «Երեւանի գարեջուր», «Ջերմուկ գրուպ», «Կոտայք գարեջրի գործարան», «Աշտարակ կաթ», «Պռոշյանի կոնյակի գործարան», «Մուշ», «Վեդի Ալկո», «Գրեյթ վելլի», Ավանի աղի կոմբինատ, Արտաշատի պահածոների գործարան, Լուսակերտի եւ «Արաքս» թռչնաֆաբրիկաներ, ՄԱՊ, «Դուստր Մարիաննա»: Այդուհանդերձ, ցանկում չեն «Ջերմուկ» արտադրող մյուս ձեռնարկությունները, «Գեղարդը», «Աթենքը», «Բարի սամարացին», «Մավա իմպուլսը» («Շանթ» ապրանքանիշով), «Դարոյինքը», սուրճի փաթեթավորման ընկերությունները եւ ուրիշներ:

Հյուրանոցներից 300 խոշոր հարկատուների մեջ են «Արմենիան» եւ «Երեւանը»: Ինչպես միշտ, բացակայում են «Գոլդեն փելեսը», «Անի պլազան», «Կոնգրեսը» եւ մյուսները: Ավելացել են նաեւ շինարարական կազմակերպությունները: Այդուհանդերձ, նրանց թիվն ու վճարած հարկային գումարները մեծ չեն վերջին տարիներին մեծ աճ արձանագրած ճյուղի համար:

Իհարկե, տարեցտարի խոշոր հարկատուների ցանկը փոփոխություններ է կրում, վճարված հարկերն ավելանում են: Սակայն, ինչպես արդեն նշել ենք բազմիցս, դա չի նշանակում, որ ստվերային տնտեսությունը մեզ մոտ էապես կրճատվել է: Խոսքը վերաբերում է ե՛ւ 300 խոշորներին, ե՛ւ այդ ցանկում չընդգրկվածներին, այդ թվում՝ փոքր ու միջին բիզնեսին:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ընդդեմ Իրանի. պատերա՞զմ, թե՞ խաղաղություն

ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների ավարտից հետո դիտորդները ուշադրություն են դարձնում, որ Բարաք Օբամայի մերձավոր շրջապատում գրեթե չկան նոր պահպանողականներ, որոնց առավել ազդեցիկ ներկայացուցիչները հրեաներ են կամ առնվազն իսրայելամետ գործիչներ: Հատկապես իրաքյան արկածախնդրությունը վերջիններիս ձեռքի գործն էր՝ վերահսկել նավթն ու ապահովել Իսրայելի անվտանգությունը: Ահա եւ տխուր ժառանգություն ստացած Օբամայի անդրանիկ գործողությունների ֆոնի վրա հառնում են նաեւ հեռագնա հարցեր՝ նորընտիր նախագահը ե՞ւս կվարի իսրայելամետ քաղաքականություն, կուլ կգնա՞ հրեա լոբբիստներին եւ, մասնավորապես, ռազմական հարված կհասցնի՞ Իրանին:

Իրանին «պատժելու» հետ կապված ամերիկյան թե իսրայելական պլանները, անշուշտ, չեն կարող չմտահոգել հայերիս. մերձակա բարեկամ պետության կյանքի հակադրական փոփոխություններն անմիջականորեն կշոշափեն Հայաստանի շահերը, բնական է, բնավ էլ ոչ դրական իմաստով: Ռուս ռազմական փորձագետներից մեկի կարծիքով, պատերազմական իրավիճակ ստեղծվելու դեպքում կարող է նկատվել բնակչության արտահոսք դեպի Հայաստան, ընդ որում, ոչ միայն «հայախոս»:

Քանի որ խոսքը վերաբերում է պատերազմական գործողությունների հավանականությանը, ապա, թերեւս, ուշագրավ են դառնում հենց ռազմական փորձագետների մեկնաբանությունները: Ռուս մասնագետների կարծիքով, ամերիկացիները կարող են գործել երեք ուղղությամբ՝ աջակցել իրանական ընդդիմությանը, զանգվածային հրթիռառմբային հարվածներ հասցնել նրա միջուկային եւ ռազմական բազաներին, ցամաքային գործողություն ձեռնարկել ոչ միայն Իրանի ռազմական պոտենցիալը ոչնչացնելու, այլեւ կրոնական վարչակարգը տապալելու նպատակով:

Առաջին տարբերակն առայժմ համարվում է անհեռանկար, քանզի Իրանում ազդեցիկ ընդդիմություն, ըստ էության, գոյություն չունի: Եթե կան դժգոհություններ, ապա դրանք ուղղված են ոչ թե ներկա քաղաքատնտեսական կարգի, այլ առանձին քաղաքական խմբերի կամ անձանց դեմ:

Նվազ հավանական է համարվում նաեւ ցամաքային հարձակումը: Նախ, հազիվ թե ամերիկացիներին հաջողվի հուսալ Իրանի հարեւան պետությունների (նույնիսկ Ադրբեջանի) աջակցությունը: Մյուս կողմից, համենայն դեպս ներկա պայմաններում, հիմքեր չկա նաեւ ներիրանական ազգամիջյան երկպառակություններ հրահրելու համար: Սակայն դրանք չեն ամենակարեւորը: Իրանի զինված ուժերը ընդգրկում են, տարբեր տվյալներով, 540-900 հազար մարդ, այդ բանակն աչքի է ընկնում մեծ կարգապահությամբ եւ նվիրվածությամբ: Եվ պատերազմի դեպքում ամերիկացիները մեծ կորուստներ կունենան, ինչը չի կարող անտեսել ԱՄՆ-ի ղեկավարությունը:

Ռուսների կարծիքով, առավել արդյունավետ է թվում երրորդ՝ «հարավսլավական» տարբերակը, որի մոտավոր սցենարը ներկայացվում է հետեւյալ կերպ: ԱՄՆ-ի ավիացիոն եւ ռազմածովային ուժերը թեւավոր հրթիռներով առաջին հարվածն են հասցնում Իրանի հակաօդային պաշտպանության միջոցներին, մարտակառավարման եւ կապի կետերին (նաեւ ռադիոլոկացիոն միջոցներով), հրթիռակայաններին, հատուկ նշանակության զորքերի տեղաբաշխման վայրերին: Այնուհետեւ, օգտագործելով մերձակա ռազմաօդային բազաները, ծավալում են ավիացիոն հզոր հարվածներ Իրանի ռազմաօդային եւ ռազմածովային բազաների, միջուկային, ռազմական եւ ռազմաարդյունաբերական օբյեկտների վրա:

Սակայն այստեղ Իրանի կողմից զուտ ռազմական (նաեւ ահաբեկչական) պատասխան հարվածներ հասցնելուց բացի ուշադրություն է հրավիրվում նաեւ մի իրողության վրա: Իրանը միանգամայն ի վիճակի է սրելու իրավիճակը Իրաքում եւ Աֆղանստանում, Պարսից ծոցի երկրներում, արաբա-իսրայելական կոնֆլիկտում եւ, չի բացառվում, Կովկասում, ինչը չի կարող չստեղծել անկայունության հսկա մի գոտի, ամերիկացիների գործողությունները հերթական անգամ հիրավի վերածելով արկածախնդրության:

Ընդհանուր առմամբ ռուս ռազմական վերլուծաբանները կասկածամիտ են ամերիկյան պլանների իրագործման հարցում: Այլ է մոտեցումը՝ առնչված Իսրայելի մտադրություններին: Եթե սկզբունքորեն Իրանը իրական սպառնալիք չէ ԱՄՆ-ի համար, ապա Իսրայելը նրան համարում է իր ոխերիմ թշնամին, եւ ոչ առանց հիմքի: Ու թեեւ Իսրայելն ունի բավարար հրթիռամիջուկային կարողություն եւ բավականին հուսալի հակահրթիռային պաշտպանություն, սակայն բոլոր դեպքերում խոցելի է առաջին հերթին սեփական տարածքի փոքրության բերումով. փաստարկներն անողոք են՝ այդ երկրի բնակչության գերակշիռ մասին ոչնչացնելու համար անհրաժեշտ են սոսկ միջին հզորության միջուկային երկու մարտագլխիկ կամ կենսաբանական զենք կրող չորս մարտագլխիկ: Ելնելով այդ պարագայից, երբ Իսրայելը չի կարող սովորական զինամիջոցներով ցանկալի արդյունքի հասնել Իրանի պես խոշոր պետության դեմ, ապա Թել Ավիվը կարող է կանխարգելման նպատակով քննության առնել միջուկային զենքի կիրառման հարցը:

Իրադրությունն աշխարհաշրջանում շարունակում է վատթարանալ, նշում են ռուս փորձագետները, եւ եթե չփոխվեն Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ագրեսիվ նկրտումներն ու խնդիրը չդրվի դիվանագիտական, բանակցային հարթության, փոխզիջումների վրա, ապա հնարավոր չի լինի բացառել անողոք հակամարտությունը ռազմի դաշտում:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
*Մոսկվա*

# ԱՄՆ հետախուզության նոր պետն է Դենիս Բլերը

Սենատը ԱՄՆ ազգային հետախուզության տնօրենի պաշտոնում երեկ հաստատել է Դենիս Բլերին, որի թեկնածությունն առաջադրել էր նախագահ Բարաք Օբաման: Բլերը կփոխարինի նախորդին այդ պաշտոնը թողած Մայքլ Մակքոնելին: «**Ազգը**» գրել է, որ վերջինիս հավանաբար պաշտոնանկ է արել նախագահ Օբաման, որը նախապես նման մտադրություն էր հայտնել:



Ասոշիեյթեդ պրես գործակալությունը տեղեկացնում է, որ Բլերի գերատեսչության մեջ մտնող 16 հետախուզական վարչությունների ընդհանուր բյուջեն 50 մլրդ դոլար է:

Պաշտոնաթող ծովակալ Բլերը նավատորմում ծառայել է 34 տարի եւ որոշ ժամանակ Խաղաղ օվկիանոսի գոտում գլխավորել է ԱՄՆ զինված ուժերի միացյալ հրամանատարությունը: Բացի դրանից, Բլերը ԿՀՎ տնօրենի տեղակալն է եղել զինված ուժերին աջակցելու գծով: Նա նաեւ Չինաստանի մասնագետ է:

Սպասվում է, որ մոտ ժամանակներս Սենատը կհաստատի նաեւ ԿՀՎ նոր ղեկավարի թեկնածությունը: Նախագահ Օբաման այդ պաշտոնի թեկնածու է առաջադրել Լեոն Պանետտային:

# ՆԱՏՕ-ի ներկայության տարիներին՝ Աֆղանստանում թմրաբույսերի ցանքերի 20-ապատիկ աճ

**Աֆղանստանում ՆԱՏՕ-ի զորքերի ներկայության տարիներին թմրաբույսերի մշակության ցանքատարածությունների մակերեսն ավելացել է 20 անգամ: Զորքերի ներկայության նախնական փուլում՝ 2001-ին, ցանքերի մակերեսը մոտ 8 հազար հեկտար էր, իսկ 2008-ի վերջերին՝ մոտ 157 հազար հեկտար: Յոթ տարում ափիոնային կակաչի բերքն ավելի քան կրկնապատկվել է: Այս տվյալներն են բերվում Պակիստանի News թերթում հունվարի 29-ին հրապարակված վերլուծական զեկուցագրում:**

**ՄԱԿ-ի տվյալներով, Աֆղանստանում ափիոնի ցանքատարածությունների մակերեսը հասել է գրեթե 200 հազար հեկտարի: Փորձագետները նշում են, որ երկրում թմրանյութերի արտադրության աճի պատճառը բնակչության մեծ մասի չքավորությունն է: Եկամուտի այլ աղբյուր չունենալով՝ գյուղացիներն աճեցնում են թմրաբույսեր, ապա բերքը վաճառում տեղական թմրամաֆիայի ներկայացուցիչներին:**

**Հետաքրքրական է, որ Աֆղանստանի կառավարության կողմից վերահսկվող հյուսիսային եւ կենտրոնական շրջաններում արտադրվում է ափիոնային կակաչի 20 տոկոսը, իսկ 80 տոկոսն արտադրվում է ՆԱՏՕ-ի զորքերի կողմից վերահսկվող հարավային նահանգներում: Արտադրության կենտրոնը բրիտանական զորքերին ենթակա Գիլմենդի նահանգն է (103 հազար հեկտար):**

**ՄԱԿ-ի տվյալներով, ներկայումս Աֆղանստանում է արտադրվում համաշխարհային շուկաներում վաճառվող ափիոնի 90 տոկոսը:**

ՀԱՄԱՌՈՏ

# ԱՄՀ. 2009-ին տնտեսական աճը նվազագույնն է 2-րդ աշխարհամարտից ի վեր

**Համաշխարհային տնտեսական աճը 2009-ին կկազմի ընդամենը 0,5 տոկոս: Այս կանխատեսումն են անում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փորձագետները: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ սա ամենացածր ցուցանիշն է 2-րդ աշխարհամարտից ի վեր:**

**Ավելի վաղ՝ 2008-ի հոկտեմբերին կանխատեսվել էր, թե համաշխարհային ՆՀԱ-ն 2009-ին կաճի 2,2 տոկոսով: Սակայն վերջին կանխատեսումները նվազ լավատեսական են: Ըստ նրա, նորել է միջազգային առեւտրի ծավալները:**

**ԱՄՀ գործադիր տնօրեն Դոմինիկ Ստրոս-Կանի** **խոսքերով, ճգնաժամից տուժած երկրներին հատկացվող վարկերի մեծ մասը կծախսվի արդեն այս տարի: Ներկայումս ԱՄՀ-ն տնօրինում է մոտ 350 մլրդ դոլար:**

**2008-ին ԱՄՀ-ից հակաճգնաժամային վարկերն ստացան Սերբիան, Լատվիան, Իսլանդիան, Պակիստանը, Ուկրաինան եւ Հունգարիան: Ընդհանուր առմամբ հատկացվեց ավելի քան 50 մլրդ դոլար: Ներկայումս քննության է առնվում եվրոպական եւ ասիական մի շարք երկրների վարկավորման հնարավորությունը:**



**Սպասվում է, որ այս տարի արդյունաբերապես զարգացած երկրների ՆՀԱ-ն կնվազի 2,8 տոկոսով, եվրոյի գոտու ՆՀԱ-ն՝ 2, ԱՄՆ-ինը՝ 1,6 տոկոսով: Ճապոնիայում սպասվում է 2,6 տոկոսանոց հետընթաց:**

**Ինչ վերաբերում է նոր զարգացող երկրներին, դրանց տնտեսական աճը կդանդաղի, 2008-ի 6,25 տոկոսից այս տարի իջնելով 3,25 տոկոսի:**

**Կանխատեսումների վերանայման պատճառը ընդհանուր ֆինանսական ճգնաժամի հարաճուն ազդեցությունն է բազմաթիվ երկրների տնտեսության վրա, ինչն իր հերթին կտրուկ կրճատել է միջազգային առեւտրի ծավալները:**

**Անցումային տնտեսություն ունեցող եւ շատ աղքատ երկրներին օգնելու համար ԱՄՀ-ին պետք է հավելյալ 150 մլրդ դոլար: Այդ մասին հունվարի 12-ին հայտարարեց հիմնադրամի ղեկավարը: Հնարավոր նվիրատուների թվում նշվում են Չինաստանի եւ Ճապոնիայի անունները: Վերջինս քննարկում է ԱՄՀ-ին 100 մլրդ դոլար տրամադրելու հնարավորությունը:**

# Օբամայի վարչակազմը նամակ կգրի Ահմադինեժադին

**Ամերիկացի դիվանագետները Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին գրվելիք նամակի նախագիծ են մշակում: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Գարդիան» թերթը, նշելով, որ աշխատանք է կատարվում ուղերձի երեք տարբերակների վրա:**

**Դիտորդների կարծիքով, Բարաք Օբամայի վարչակազմն այդ ձեւով ուզում է ցուցադրել իրանցիների հետ երկխոսություն սկսելու իր պատրաստակամությունը:**

**Պետդեպարտամենտի աղբյուրները պնդում են, որ ԱՄՆ-ը, ամենայն հավանականությամբ, չի շարունակի Ջորջ Բուշի քաղաքականությունը, ըստ որի Իրանը ներառված էր «չարիքի առանցքի» մեջ: Բուշը հայտարարում էր, թե Իրանը փորձում է միջուկային զենք մշակել, իսկ իրանցիները շեշտում էին իրենց միջուկային ծրագրի խաղաղ բնույթը:**

**Օբամայի հաշտվողական տրամադրվածությունը եւ Ահմադինեժադի հետ բանակցելու մտադրությունը կասկած չեն հարուցում: Բացառված չէ, որ Վաշինգտոնն արծարծի Թեհրանում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչություն կամ «շահերի բաժանմունք» բացելու հնարավորության հարցը: Նախկին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը «Գարդիանի» թղթակցին ասել է, որ 2008-ի երկրորդ կիսամյակում Թեհրանում ամերիկյան ներկայացուցչություն չբացվեց լոկ այն պատճառով, որ Բուշի ուշադրության կենտրոնում ռուս-վրացական հակամարտությունն էր:**

**Անցյալ տարվա նոյեմբերի 6-ին Ահմադինեժադը Օբամային շնորհավորել էր նախագահ ընտրվելու առթիվ: «Գարդիանի» տվյալներով, Իրանի նախագահի նամակին պատասխանելու նախաձեռնության հեղինակը նոր պետքարտուղար Հիլարի Քլինթոնն է:**

# Իսրայելը ռմբակոծել է Գազայի զինագործարանը

**Իսրայելի օդուժը երեկ գիշեր ռմբակոծել է Գազայի հատվածում՝ Եգիպտոսի սահմանից ոչ հեռու գտնվող զինագործարանը: Ռաֆահ քաղաքի մերձակայքում կառուցված գործարանը զգալի չափով վնասվել է, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով ականատեսներին եւ «Համաս» շարժման ներկայացուցիչներին: Բնակիչների մեջ զոհեր չկան:**

**Ռմբակոծումների փաստը հաստատել են Իսրայելի պաշտպանության նախարարությունում: Հունվարի 18-ի զինադադարից հետո սա Գազայի տարածքի առաջին ռմբակոծությունն է: Դրան նախորդել էր Իսրայելի տարածքի հրթիռակոծումը պաղեստինցի գրոհայինների կողմից:**

**Չորեքշաբթի առավոտյան Իսրայելի օդուժը հարվածել էր Գազան Եգիպտոսին միացնող գաղտնի գետնուղիները, որոնք ծառայել էին զենքի մաքսանենգ ներկրմանը:**

**«Զինագործարանի ռմբակոծության համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում է «Համասի» վրա», հայտարարել է Իսրայելի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը «Հաարեց» թերթին տված հարցազրույցում: Նա հավաստիացրել է, որ իսրայելական բանակն այսուհետեւ էլ անպատասխան չի թողնի պաղեստինցիների ահաբեկչական հարձակումները:**

## Մշակույթ

# «Օրերի» հերթական համարում

Պրահայում լույս տեսնող «Օրեր» անկախ պարբերականի 2008-ի 4-րդ համարի առաջնային թեման Վիլյամ Սարոյանի 100-ամյակի առիթով հրապարակումների շարք է, որոնց մի մասը Պրահայի ամերիկյան մշակույթի կենտրոնում հոկտեմբերին տեղի ունեցած հոբելյանական ձեռնարկի ընթացքում հնչած ելույթներն են, ինչպես նաեւ հատվածներ մի շարք հեղինակների հրապարակված հոդվածներից: Այդ օրը Վ. Սարոյանին նվիրված լուսանկարչական տեսաշարային, գրաֆիկական աշխատանքների, ԽՍՀՄ-ԱՄՆ 1991-ին համատեղ թողարկված դրոշմանիշների, գրողի՝ հայերենով, չեխերենով, անգլերենով լույս տեսած գրքերի ցուցահանդեսներ են կազմակերպվել: Սարոյանի օտարալեզու թարգմանությունների գերակշիռ մասը, ըստ չեխ թարգմանիչ Յիրժի Յունեկի, չեխերենով է:

Նոյեմբերին Բրյուսելում անցկացված «Ուղեւորություն դեպի վերաբացահայտում՝ հայկական ժառանգությունը Թուրքիայում» խորհրդաժողովում հնչած Հակոբ Ասատրյանի անդրադարձը մի շարք կարեւոր հարցերի է վերաբերում: Ինչպիսի՞ն է եղել հայկական մշակութային ժառանգությունը Թուրքիայում, ի՞նչ է մնացել 1915-ից հետո, ինչպե՞ս է ընթանում մշակութային վերաբացահայտումը եւ ո՞րն է Եվրոմիության դերն այս ժառանգության պահպանման խնդրում:

Ե՛վ հայ, և՛ թուրք բանախոսների մտահոգությունները որոշակիորեն նույնաբնույթ են եղել: Օրինակ, թուրք փաստաբան Ֆեթհիե Չեթինը ներկայացնելով իր «Իմ տատիկը» գրքի արձագանքները Թուրքիայում՝ ասել է, թե շատ ընթերցողներ սկսել են հետաքրքրվել իրենց արմատներով եւ Թուրքիայում տաբու համարվող հայկական թեմաներով:

Պատմաբան, լրագրող Օսման Քյոքերի կազմակերպած հին բացիկների ցուցահանդեսը ըստ էության հրաշալի պատկերացում է տվել շուրջ 100 տարի առաջ Թուրքիայում հայերի վիճակի, ունեցած դերի ու դիրքի, նաեւ բնակչության թվաքանակի մասին: Իր ելույթում Օսման Քյոքերը նշել է, որ մինչեւ 1915-ի Հայոց ցեղասպանությունը 16 միլիոնանոց Թուրքիայում, ըստ պաշտոնական տվյալների, ապրել են 1,5 մլն հայեր, այսօր 72 մլն-անոց Թուրքիայում՝ 60.000:

Պատրիկ Տոնապետյանը ներկայացրել է 1912-13-ից ցայսօր հայկական մշակութային ժառանգության ընդհանուր պատկերը Թուրքիայում: Պոլսի պատրիարքարանի տվյալներով, անցյալ դարասկզբին իրենց են պատկանել 2533 եկեղեցի եւ 451 վանք, 1915-ից հետո 641 եկեղեցի քանդվել եւ ոչնչացվել է, որին հաջորդել են այդպիսի հարյուրավորներ:

Ելույթ ունեցողները կոչ են արել Եվրոխորհրդարանին Թուրքիայի վրա ճնշում գործադրել հայկական մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ, մանավանդ հայ-թուրքական հարաբերությունների արդի փուլում, երբ հնարավորություն է տրված եւ խնդիր դրված այդ հարաբերությունների որակական փոփոխությունների՝ նաեւ միջմշակութային երկխոսության միջոցով:



Այս համարում տպագրված է Ալեքսանդր Վարպետյանի «Նեբրայի երկնային սկավառակը» ուսումնասիրության շարունակությունը: Էաբանության, ազգաբանության վարպետյանական մեկնաբանությունը անդրադարձ է նախասկզբին, նախագաղափարին. «տիեզերական ամեն մի ավարտ դառնում է նոր մի կիսաշրջանի սկիզբ, մինչեւ լիակատար էացում, որ հայերենում միաժամանակ նշանակում է «ի բնե լինել» եւ «հոր նման դառնալ», գրում է Ալ. Վարպետյանը:

Օրեր առաջ Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակի արժանացավ մրցանակների բավականին հարուստ կենսագրություն ունեցող հեռուստալրագրող, «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Մերոնք» հաղորդաշարերի հեղինակ Ռաֆայել Հովհաննիսյանը: Նրա հետ «Օրերի» հարցազրույցից տեղեկանում ենք, որ հեռուստալրագրողը նախաձեռնողն է եղել երկու մշակութային կարեւոր ծրագրերի՝ Վիլյամ Սարոյանի արձանի՝ Երեւանում տեղադրման եւ Հայֆեստի թատերական փառատոնում սարոյանական շաբաթի անցկացման: Հետաքրքրական է նաեւ Սարոյանի մասին աշխարհի տարբեր երկրներում ֆիլմ նկարելու նրա գաղափարը:

Քանդակագործ Դավիթ Երեւանցին հեղինակն է Սարոյանի երեւանյան քանդակի: Երեք մետրանոց, 450 կիլոգրամանոց բրոնզե արձանը ձուլվել է Չեխիայում, որովհետեւ, ինչպես «Օրերի» հետ իր հարցազրույցում ասում է արձանագործը, «Փարիզում թանկ է, Երեւանում՝ անորակ, Չեխիայում և՛ որակով է, և՛ ավելի էժան»: Արձանի ստեղծման վրա Դ. Երեւանցին աշխատել է 6-7 ամիս: Երեւանում դա իր յոթերորդ գործն է, Փարիզում՝ տասնիհնգերորդը: Մեծ գրողի եւ հումանիստի կերպարն արձանացնելիս՝ նա իր հուշերից փորձել է սարոյանական մարդկային պարզ, անմիջական նկարագիր վերհանել:

Չեխիայի կինոթատրոններում ցուցադրված չեխ կինոբեմադրիչ Յանա Շեւչիկովայի «Գյումրի» ֆիլմը Հռոմում արժանացել է «Կուլտ» մրցանակի, մասնակցել Լայպցիգի եւ Չեխիայի միջազգային կինոփառատոններին: Գյումրիի երկրաշարժի 20-րդ տարելիցին նվիրված ֆիլմի հեղինակը 2004-ից բազմիցս եղել է Գյումրիում, զրուցել աղետյալ բնակիչների հետ, ծանոթացել 40-ից ավելի մարդկային ճակատագրերի պատմություններին, ստեղծել հոգեբանական ազդեցիկ ֆիլմ: «Ես չէի ուզում, որ այդ ֆիլմում արցունքներ երեւային», ասում է նա, բայց եւ պատմում է, թե ինչ հոգեկան ապրումներ ու ցնցումներ է ունեցել, նույնիսկ իրեն խորհուրդ են տվել հոգեբույժի մոտ գնալ, սակայն չի դիմել, որպեսզի «չխզվի կապը այդ ցավի հետ, որովհետեւ կտուժեր ֆիլմը»: «Իմ հերոսներից մեկը գիշերները թխվածք է թխում, որ վաճառի, ցերեկները հիվանդանոցում բուժքույր է աշխատում, որպեսզի երեխային կարողանա միջնակարգ դպրոց ուղարկել, ամսական ստանալով 30 դոլար աշխատավարձ», ասում է Յանան:

Հետաքրքրական է նաեւ հանդիպումը հայկական ծագումով «Դետի Պիկասո» մոսկովյան էթնիկ ռոք խմբի մենակատար Գայանե Հարությունյանի հետ: Խումբը համերգային ելույթներ են ունեցել Պրահայի «Քրոս» ակումբում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Հարրի Քունդակչյան. հետահայաց ցուցահանդես

Նյու Յորքի «Սիթի» համալսարանի շրջանավարտների կենտրոնում հունվարի 30-ին բացվելու է միջազգային ճանաչման արժանացած ֆոտոլրագրող Հարրի Քունդակչյանի լուսանկարների հետահայաց ցուցահանդեսը, որը բաց է մնալու մինչեւ ապրիլի 3-ը:

Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթըր» շաբաթաթերթի տեղեկատվության, արվեստագետին ներկայացնելու է համալսարանի արվեստի պատմության բաժնի շրջանավարտներից իր դոկտորական թեզի վրա աշխատող Միսրա Աբբասփուրը:

Քունդակչյանը ծնվել էր Բեյրութում (Լիբանան) եւ սկսել պրոֆեսիոնալ լուսանկարչությամբ զբաղվել 1952-ից, երբ աշխատում էր ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Լ'Օրիան» եւ նրա արաբերեն տարբերակ «Ժարիդա» թերթում: 1966-ին միանում է «Ասոշիեյթեդ պրես» գործակալությանը եւ իր տաղանդի շնորհիվ 1974-ին դառնում Մերձավոր Արեւելքի լրատվության գլխավոր լուսանկարիչ-խմբագիրը: Միջազգային այդ հեղինակավոր կազմակերպությունում նա աշխատել է ավելի քան 40 տարի՝ հազվադեպ լուսանկարներով հարստացնելով ամենաթեժ տարածքներից ստացված լրատվությունները: Արժանացել է բազմաթիվ մրցանակների, այդ թվում՝ «Ուորլդ պրես ֆոտո» եւ «Մենեջինգ էդիտորզ» մրցանակները: Լուսաբանել է պատերազմներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ եւ այլ բնական եւ արհեստական աղետներ աշխարհի 22 երկրներից: Նրան հաճախ կարելի էր տեսնել Լիբանանում եւ Նյու Յորքում իր լուսանկարչական ապարատով:

Հ. Ծ.

# «Արմինյն ռիվյուն» ունի նոր խմբագիր

Առաջին անգամ 1948 թվին «Հայրենիք պրեսի» հրատարակությամբ լույս տեսած «Արմինյն ռիվյու» ակադեմիական հոդվածների պարբերականի նոր խմբագիր է նշանակվել Ուոլթհեմի (Մասաչուսեթս) Բենթլի համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս դոկտ. Ասպետ Քոչիկյանը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթըր» շաբաթաթերթը:

«Արմինյն ռիվյուն» սկզբնական շրջանում եղել է եռամսյակային հրատարակություն: Այժմ հրատարակվում է տարեկան 2 անգամ: Խմբագրական կազմում ընդգրկված են Ռիչարդ Հովհաննիսյանը, Սթիվն Աստուրյանը, Լեւոն Չորբաճյանը, Պիտեր Քաուին, Վահագն Տատրյանը, Գ. Կոշկարյանը, Արա Խանջյանը, Տիգրան Գույումճյանը, Մարկ Նշանյանը, Սյուզան Փաթին, Ռոնալդ Գրիգոր Սյունին եւ Խաչիկ Թյոլոլյանը:

Դոկտ. Քոչիկյանը հավաստիացրել է, որ պարբերականը շարունակելու է իր ավանդական սկզբունքներին հավատարիմ մնալ, կենտրոնանալով հիմնականում Հայաստանին եւ հայերին վերաբերող սոցիալ-քաղաքական, պատմական եւ տնտեսական հարցերի քննարկման վրա:

Նախկին խմբագիր դոկտ. Տիգրան Գալիկյանը շարունակելու է աշխատել որպես կառավարման բաժնի վարիչ-խմբագիր: Դոկտ. Վարդան Մաթիոսյանը նշանակվել է գրախոսության բաժնի պատասխանատու խմբագիր:

Հ. Ծ.

«ԱՅԳԱԲԱՑԻ ՏԱՍՆՕՐՅԱԿ»

# ԻԻՀ հեղափոխության 30-րդ տարեդարձին նվիրված

**Ուղիղ 30 տարի առաջ Իրանի ժողովուրդը Իմամ Խոմեյնու առաջնորդությամբ իրականացրեց հեղափոխություն, տապալելով 2500 տարվա թագավորական իշխանությունը ու ստեղծեց ժողովրդական իսլամական հանրապետություն: Հեղափոխությամբ մի նոր դարաշրջան սկսվեց Իրանի ժողովրդի համար: Երկրի զարգացման գործընթացին ներգրավվեցին հասարակության տարբեր շերտեր եւ կամաց-կամաց պակասեց**





**գյուղի ու քաղաքի բնակչության անգրագիտության տոկոսը, բարելավվեց երկրի սանիտարական եւ առողջապահական վիճակը, բարձրացավ մարդկանց բարեկեցության աստիճանը: Հեղափոխության հաղթանակի 30-րդ տարեդարձի առիթով անցկացվող «Այգաբացի տասնօրյակի» շրջանակներում երեկ Երեւանի «Կապույտ մզկիթում» լրագրողների հետ հանդիպման ընթացքում Հայաստանի ԻԻՀ դեսպանատան մշակույթի խորհրդատու Մուհամադ Շաքիբան մանրամասնեց անցկացվող միջոցառումները ու բարձր գնահատեց հայ-իրանական դարավոր բարեկամական ու բարիդրացիական կապերը:**

**Հունվարի 30-ին Հայաստանի նկարիչների միությունում կբացվի ցուցահանդես, որտեղ ներկայացված կլինեն երեք գեղանկարիչների կերպարվեստի նմուշներ: Հաջորդ օրը Քանաքեռ-Զեյթուն համայնքի մանկատանը երեխաներին այցի ընթացքում կտրամադրվի առաջին անհրաժեշտության եւ սննդի հիմնական պարագաներ: Փետրվարի 2-ին ՀԱ գրադարանում կբացվի Իրանում վերջին տարիներին հրատարակված մոտ 1000 կտոր գրքերի ցուցահանդես, իսկ հաջորդ օրը ԱՕԿՍ-ում նախատեսվում է մի խումբ իրանահայերի հետ քննարկում «Ժամանակակից Իրանի եւ հեղափոխության ձեռքբերումները» թեմայով: Փետրվարի 4-ին կամփոփվի «Իրանը իմ աչքերով» մրցույթի արդյունքները, որին մասնակցել են հանրապետության այն դպրոցների աշակերտները, որոնք ուսումնասիրում են պարսկերեն լեզուն: Փետրվարի 5-ին ՀԳ միությունում կայանալիք միջոցառումը նվիրվելու է իրանական պոեզիային՝ Ռուդաքիից մինչեւ Ղեյսար: Նաեւ գրքի ցուցահանդես կբացվի ցերեկույթի ընթացքում: Միջոցառումների շարքը կամփոփվի Արամ Խաչատրյան ֆիլհարմոնիկ համերգասրահում՝ իրանական ժողովրդական ու ավանդական երաժշտության համերգով, որին մասնակցելու համար հատուկ Հայաստան կժամանեն իրանցի 15 կին երաժիշտներ, երգչուհիներ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ռուսական արվեստի շուկան հուսահատական չէ

**«Ճիշտ է, տնտեսական ճգնաժամն իր ազդեցությունը թողել է, բայց ոչ այնքան ուժեղ, որքան ասենք իմպրեսիոնիստական արվեստի վրա: Ռուսական արվեստի շուկան դեռեւս մնում է աշխույժ եւ կենսունակ: Հունիսի համեմատ մի փոքր թույլ գուցե, բայց ոչ հուսահատական», նշել է Մակդուգլ աճուրդի կենտրոնի տնօրեն Ուիլյամ Մակդուգլը, խոսելով դեկտեմբերին Լոնդոնում ավարտված ռուսական արվեստի շաբաթվա առթիվ:**

**Այս մասին է գրել «Արմինյն միրոր-սփեքթեյթըր» շաբաթաթերթում Լոնդոնից Ռոլանդ Օլիֆանտը, հավելելով, որ սովորաբար Լոնդոնում ռուսական արվեստի աճուրդներ կազմակերպվում են տարեկան 2 անգամ՝ հունիսին եւ նոյեմբերին կամ դեկտեմբերին: Լոնդոնյան աճուրդի գլխավոր կենտրոնները՝ «Քրիստիզը» եւ «Սոթբիզը» սովորաբար միանալով «Մակդուգլի» կենտրոնի հետ փորձում են ինչքան հնարավոր է շատ հաճախորդներ գրավել: Աճուրդի են դրվում ինչպես ռուս նկարիչների կտավները, այնպես էլ հին հրատարակությունների գրքեր, Ֆաբերժե զոհարեղեններ, սրբապատկերներ եւ հեծելազորի թրեր: Այս անգամ որոշ ցուցանմուշներ նույնիսկ ավելի բարձր գին են բերել, քան իրենց նախնական արժեքը եւ «Սոթբիզը» նույնիսկ հավելյալ եկամուտ է արձանագրել համեմատած իր 2007-ի արդյունքների հետ:**

**«Մենք հնարավորություն չունենք Ռուսաստանում աճուրդներ անցկացնելու: Այդ պատճառով էլ այստեղ ենք մեր ջանքերը միավորում եւ դա մի տեսակ մրցակցություն է ստեղծում, որն ինքնին խրախուսելի է», բացատրել է «Քրիստիզի» ներկայացուցիչը, խոստովանելով, որ հունիսի արդյունքները շատ ավելի լավ էին: «Բայց ռուսական արվեստի համբավը դեռ բարձր է եւ շուկան պահանջարկ ունի», ավելացրել է Մակդուգլը, որն արվեստի բնագավառում աշխատելուց առաջ տնտեսագետ է եղել:**

**«Սոթբիզում» ներկայացված կայսերական եւ պալատական ցուցանմուշները ամենաշատ գնահատված իրերն են եղել: Դրանք մոտ 2 միլիոն ֆունտ ստեռլինգ են բերել կենտրոնին, համարյա կրկնապատկելով իրենց նախնական գնահատումները: Հավելյալ 15 միլիոն ստեռլինգ են բերել մյուս ցուցանմուշները: Վլադիմիր Մակովսկու (1864-1920) «Հնաշորերի շուկան Մոսկվայում» կտավը, որը երկար ժամանակ Կոպենհագենի խանութներից մեկում կախված էր մնացել, վաճառվել է «Սոթբիզում» ռեկորդային գնով: «Մակդուգլում» Կոնսանտին Սոմովի (1869-1939) 122 թանաքով արված նկարները («Մարկիզի գրքի» համար) բերել են ավելի քան 1 միլիոն ֆունտ ստեռլինգ: Բայց ցավալիորեն Այվազովսկու ծովանկարներից մեկը եւ Եկատերինա Բ-ի արծաթե ապուրամաններից մեկը, որը ներկայացված է եղել որպես «18-րդ դարի ռուսական արվեստի գլուխգործոցներից մեկը», ընդհանրապես չեն հետաքրքրել գնորդներին:**

Հ. Ծ.

## Ճգնաժամն ու թատրոնների եկամուտները

Նախորդ տարի Լոնդոնում վաճառվել է 13,8 միլիոն թատրոնի տոմս, որից 9 միլիոնը՝ մյուզիքլի: Եկամուտն էլ կազմել է 480,6 միլիոն ֆունտ ստեռլինգ՝ 652 միլիոն դոլար: Տվյալներն այս հրապարակել է Ռոյթեր գործակալությունը, ինչն, ըստ լոնդոնյան 52 թատրոն միավորող Լոնդոնյան թատրոնների ընկերության հաշվարկների, նշանակում է 2007 թվականի համեմատությամբ այցելուների թվի 1, եկամուտների 3 տոկոս աճ:

Նույնատիպ աճ է արձանագրվել նաեւ Նյու Յորքի թատրոններում՝ եկամուտը 940,9 միլիոն դոլար, այցելուները՝ 12,3 միլիոն:

Ն. Պ.

***Երեւանի «Արարատը» հանրապետության թիմերից առաջինն էր, որ նոր մրցաշրջանում մրցասպարեզ դուրս եկավ՝ մասնակցելով Մոսկվայում անցկացված «Համագործակցության գավաթի» խաղարկությանը: Մրցաշարում թիմի մրցելույթների եւ նոր մրցաշրջանի նախապատրաստական աշխատանքների շուրջ է ստորեւ ներկայացվող հարցազրույցը «Արարատի» գլխավոր մարզիչ Աշոտ Կիրակոսյանի հետ:***

**- Պարոն Կիրակոսյան, նախ անդրադառնանք մոսկովյան մրցաշարում թիմի ելույթներին:**

- Ինչպես գիտեք, «Արարատը» թերի կազմով էր մեկնել Մոսկվա: Բացակայում էին բրազիլացի ֆուտբոլիստները, ինչպես նաեւ Վահագն ու Արթուր Մինասյանները: Բացի այդ, մրցաշարին լրջորեն նախապատրաստվելու համար նպաստավոր պայմաններ չենք ունեցել: Երեւանում մարզվել ենք «Սպարտակի» թեթեւաատլետիկական մանեժում եւ «Կիլիկիայի» մարզադահլիճում: Բնականաբար, չէինք կարող այնպիսի պատրաստվածության աստիճանի հասնել, որ կարողանայինք Մոսկվայում արհեստական խոտածածկով խաղադաշտերում հաջող ելույթներ ունենալ: Ցանկանում էինք գոնե

**- Իսկ դարպասապահներն իրենց ինչպե՞ս դրսեւորեցին:**

- Նիկոլայ Սարգսյանի խաղը կարելի է գերազանց գնահատել: Գեւորգ Պրազյանը թեթեւ վնասվածք ուներ, ինչն էլ նրան խանգարեց լավ հանդես գալ:

**- Բոլորին հետաքրքրում է «Արարատի» բրազիլացի ֆուտբոլիստների հետագա ճակատագիրը:**

- Ֆուտբոլասերները հավանաբար տեղյակ են, որ Մարկոսը, Ջեֆերսոնն ու Ռենատոն այժմ խաղում են Փարիզի «Արարատում»: Ճիշտ է, Ռենատոն ներկայումս փորձաշրջան է անցնում Սլովենիայում: Տեղեկացնեմ, որ նրանք Հայաստան չեն վերադառնալու եւ առաջնությանը չեն մասնակցելու: Հնարավոր է, որ թիմին միանան միայն ՈւԵՖԱ-ի գավաթի մրցաշարում: Առայժմ պետք է ապավինենք տեղի ֆուտբոլիստների ուժերին: Սակայն հարկ եղած դեպքում թիմի կազմն ուժեղացնելու համապատասխան միջոցներ ձեռք կառնենք:

**- Առաջնության մասնակից գրեթե բոլոր թիմերը համալրել են իրենց կազմը, իսկ «Արարատն» ավելի շատ կորուստներ է ունեցել: Այս փաստը ձեզ չի՞ անհանգստացնում: Ունե՞ք համալրումներ:**

# Աշոտ Կիրակոսյան. «Եղած ուժերով կձգտենք մեզ լավագույնս դրսեւորել»



«Բանանցի» կամ «Միկայի» արհեստական խոտածածկով խաղադաշտերում մարզվել, սակայն դրանք ծանրաբեռնված էին, ուստի չտրամադրեցին մեզ:

Ասեմ, որ շատ ուժեղ խմբում էինք ընդգրկվել: Ինչպես գիտեք, մեր մրցակիցներից մեկը՝ Ղազախստանի չեմպիոն «Ակտոբեն» հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ միայն 11 մ հարվածներով զիջեց «Շերիֆին», իսկ Տաշքենդի «Պախտակորը» հանդես եկավ կիսաեզրափակիչում: Նաեւ նշեմ, որ մեր մրցակիցներն իրենց հիմնական կազմերով էին ներկայացել մրցաշարին եւ մեծ թվով ֆուտբոլիստներ ունեին, ուստի անհրաժեշտության դեպքում կարողանում էին թարմ ուժեր մտցնել մրցասպարեզ:

Առաջին խաղում մինչեւ տղաները կհարմարվեին արհեստական խոտածածկին, «Ակտոբեի» խաղարձին, գնդակը երեք անգամ հայտնվեց մեր դարպասում: Ընդմիջումից հետո հաջողվեց որոշ չափով կարգավորել խաղը եւ գոլ խփելով շահել 2-րդ խաղակեսը:

Հաջորդ օրը ծանր մրցախաղ անցկացրինք «Պախտակորի» հետ: Առաջին կես ժամում հաշիվը հավասար էր (1-1), սակայն հետագայում տղաները չդիմացան ծանրաբեռնվածությանը ու պարտվեցին 1-4 հաշվով: Մեկօրյա հանգստից հետո «Ռուբինի» հետ խաղում արդեն տղաներն իրենց լավ դրսեւորեցին ու կազմակերպված խաղ ցուցադրեցին: Նույնիսկ «Ռուբինի» ֆուտբոլասերներն էին խաղի ընթացքում մեզ երկրպագում: Շնորհիվ Մովսիսյանի եւ Սերգեյ Էրզրումյանի խփած գոլերի 2-րդ խաղակեսի սկզբում հաղթում էինք 2-0 հաշվով: Ցավոք, հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց: «Ռուբինն» անակնկալ գոլ խփեց, հետո 11 մ-ով վերականգնեց հավասարակշռությունը: Դրանից հետո մրցակիցը եւս մեկ 11 մ հարվածի իրավունք ստացավ, բայց Նիկոլայ Սարգսյանը հետ մղեց հարվածը: Ինձ թվում է, որ 3-րդ գոլը «Ռուբինը» խփեց «խաղից դուրս» վիճակից: Համենայնդեպս, մեր ֆուտբոլիստները դադարեցրին պայքարը՝ սպասելով մրցավարի սուլիչին, իսկ մրցակիցը գլխի հարվածով հանգիստ գրավեց դարպասը:

Ամփոփելով թիմի ելույթները, կարելի է ասել, որ թիմը կոլեկտիվ ֆուտբոլ ցուցադրեց, ֆուտբոլիստներն իրենց ուժերի ներածի չափով խաղացին: Հնարավորություն ստացանք փորձարկելու թիմի երիտասարդ ֆուտբոլիստներին: Իհարկե, շատ դժվար էր արհեստական խոտածածկի վրա չորս օրում երեք ծանր խաղ անցկացնել ուժեղ մրցակիցների հետ: Մանավանդ, որ ֆուտբոլիստները դեռեւս պատրաստ չէին: Դա էր պատճառը, որ «Արարատը» Մոսկվայում ցածր արդյունք ցույց տվեց:

**- Դատելով թիմի խփած գոլերից, կարելի է ենթադրել, որ առջեւի գծի խաղացողները իրենց վատ չդրսեւորեցին: Իսկ պաշտպանական օղակում երեւի թե հիմնախնդիրներ կային:**

- Ուժեղ մրցակիցների հետ 3 խաղերում 4 գոլ խփելը կարծում եմ վատ արդյունք չէ, հուսադրող է: Ես լավատես եմ, հուսով եմ, որ այդ գծի խաղացողներն իրենց կարդարացնեն: Պաշտպանությունում իրոք որոշ հիմնախնդիրներ կային: Արթուր Պետրոսյանին տեղափոխել էինք պաշտպանության կենտրոն եւ ժամանակ էր անհրաժեշտ, որ հստակ համագործակցություն հաստատեր Հրայր Մկոյանի հետ: Ձախ թեւում փորձարկեցինք երիտասարդ Արսեն Մարտիրոսյանին: Կիսապաշտպանական օղակն ակտիվ էր գործում՝ օգնելով եւ պաշտպաններին, եւ հարձակվողներին:

- Համալրումները նվազագույն են: «Միկայից» ընդունել ենք պաշտպան Վիրաբ Մեյթիխանյանին, ուլիսցի Գոռ Աքաբեկյանը դեռեւս փորձաշրջան է անցնում թիմում: «Արարատում» մարզված Գալուստ Պետրոսյանը մեկնել է Իրան եւ մինչեւ մայիս հանդես կգա արտերկրում, որից հետո կմիանա մեզ: Իր դիմումի համաձայն «Գանձասար» է տեղափոխվել Արտաշես Անտոնյանը:

**- Թիմի ավագ Արթուր Մինասյանը ծանր վնասվածքից հետո անհատական ծրագրով էր մարզվում: Ինչպիսի՞ն է նրա վիճակը:**

- Նա արդեն մարզվում է թիմի հետ, աստիճանաբար ավելացնում է մարզումների ծանրաբեռնվածությունն ու իմ կարծիքով մեկ ամիս հետո պատրաստ կլինի:

**- Նշան Էրզրումյանը գրեթե մեկամյա հարկադիր պարապուրդից հետո ինչպիսի՞ մարզավիճակում է:**

- Նա դեռեւս վնասվածքից ամբողջովին չի ապաքինվել: Բայց մինչեւ մրցաշրջանի մեկնարկը Նշանն էլ լավ մարզավիճակ ձեռք կբերի:

**- Սերգեյ Էրզրումյանն էլ խաղային պրակտիկայի պակաս ուներ...**

- Մոսկվայում Սերգեյն իրեն գերազանց դրսեւորեց: Նրան տեղափոխել էինք կենտրոնական կիսապաշտպանի գոտի, որտեղ իրեն շատ լավ դրսեւորեց հատկապես «Ռուբինի» հետ խաղում՝ դառնալով նաեւ գոլի հեղինակ: Այնպես որ Սերգեյ Էրզրումյանն այդ գոտում Արթուր Մինասյանի հետ օգտակար կլինի թիմին ու կամրապնդի դաշտի կենտրոնական հատվածը:

**- Մեկնարկային երկու խաղերում բացակայում էր Սարգիս Մովսիսյանը, ի՞նչն էր պատճառը:**

- Նա վատառողջ էր, որի պատճառով մասնակցեց միայն «Ռուբինի» հետ հանդիպման առաջին խաղակեսին: Սարգիսն իրեն լավ դրսեւորեց՝ բացելով խաղի հաշիվը:

**- Ինչպիսի՞ն է «Արարատի» նախապատրաստության հետագա ծրագիրը:**

- Փետրվարին նախատեսվում է ուսումնամարզական հավաք Խորվաթիայում, որի ընթացքում ուշադրություն կդարձվի ֆուտբոլիստների ֆիզիկական, տեխնիկական եւ տակտիկական որակների բարելավմանը, կանցկացվեն ստուգողական հանդիպումներ: Հնարավոր է, որ հավաքի ժամանակ փորձարկվեն օտարերկրացի երկու ֆուտբոլիստներ, որոնք պաշտպանական եւ կիսապաշտպանական օղակի խաղացողներ են:

**- Թիմի առջեւ նոր մրցաշրջանում արդեն խնդիր դրվե՞լ է:**

- Դեռեւս ոչ: Բայց ձգտելու ենք եղած ուժերով մեզ լավագույնս դրսեւորել:

ՇԱԽՄԱՏ

# Լեւոն Արոնյանը գլխավորեց աղյուսակը



**Վեյք ան Զեեի շախմատի մրցաշարի վերջնագծում Լեւոն Արոնյանը պարզապես հիանալի է խաղում: 10-րդ տուրում Լեւոնը նոր հաջողության հասավ անգլիացի Մայքլ Ադամսի հետ մրցավեճում: Նավակային վերջնախաղում նա կարողացավ իրացնել երկու զինվորի առավելությունը ու 40-րդ քայլում 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Այդ հաջողությունը հնարավորություն տվեց Արոնյանին 6,5 միավորով միանձնյա գլխավորել աղյուսակը:**

**Սերգեյ Մովսիսյանը սպիտակներով խաղում էր չին շախմատիստ Վանգ Յուեի հետ: 22-րդ քայլում մրցակիցները հաշտություն կնքեցին: Մովսիսյանը 5,5 միավորով Դոմինգուեսի, Ռաջաբովի եւ Կառլսենի հետ բաժանում է 3-6-րդ տեղերը: 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է ուկրաինացի Սերգեյ Կարյակինը, որը ոչ-ոքի խաղալով վան Վելիի հետ, վաստակեց 6 միավոր: Իսկ ահա նախորդ տուրից հետո առաջատարների շարքում գտնվող կուբացի Լենիեր Դոմինգուեսն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով նորվեգացի Մագնուս Կառլսենին: Վերջինս առաջին անգամ ճաշակեց հաղթանակի քաղցրությունը: Ի դեպ, մրցաշարում միայն Արոնյանն ու Կառլսենը դեռեւս չեն պարտվել:**

**Ոչ-ոքի ավարտ ունեցան Ռաջաբով-Սմիթս, Սթելվագեն-Մորոզեւիչ, Իվանչուկ-Կամսկի պարտիաները: Սմիթսն ու վան Վելին վաստակել են 5 միավոր, Ադամսը, Կամսկին, Վանգ Յուեն եւ Իվանչուկն ունեն 4,5 միավոր: Նրանցից կես միավորով հետ է մնում Սթելվագենը: Աղյուսակը 3,5 միավորով եզրափակում է Մորոզեւիչը:**

**11-րդ տուրում Արոնյանը սեւերով մրցելու է Դոմինգուեսի հետ: Մովսիսյանի մրցակիցը կլինի հոլանդացի վան Վելին: Տեղի կունենան նաեւ Կամսկի-Կարյակին, Վանգ Յուե-Ռաջաբով, Մորոզեւիչ-Կառլսեն, Ադամս-Իվանչուկ, Սմիթս-Սթելվագեն մրցախաղերը:**

# Մրցանակների հավակնորդները հայտնի են

**Թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում կանանց մրցաշարում հայտնի դարձան եզրափակիչի մասնակիցները: Գլխավոր մրցանակը կվիճարկեն ռուսաստանցի Դինարա Սաֆինան եւ ամերիկացի Սերենա Ուիլյամսը: Սաֆինան 6-3, 7-6 հաշվով պարտության մատնեց Վերա Զվոնարյովային, իսկ Ուիլյամսը հաղթեց Ելենա Դեմենտեւային (6-3, 6-4):**

**Տղամարդկանց մրցաշարում եզրափակիչի առաջին մասնակիցը Ռոջեր Ֆեդերերն է, որը երեք խաղափուլում պարտության մատնեց Էնդի Ռոդիկին (6-2, 7-5, 7-5): Նրա մրցակիցը կորոշվի Ռաֆայել Նադալի եւ Ֆեռնանդո Վերդասկոյի մրցավեճում: Տղամարդկանց զուգախաղում կհանդիպեն Բրայան եղբայրները եւ Բհուպաթի-Նոուլզ երկյակը:**

**Կանանց զուգախաղում հաջող են հանդես գալիս Ուիլյամս քույրերը, որոնք հաղթելով Դելակուա-Սկիավոնե զույգին (6-0, 6-2), մտան եզրափակիչ: Այստեղ նրանց մրցակիցը կլինի Հանտուխովա-Սուգիյամա զույգը, որն առավելության էր հասել Դեշի-Սանտանջելա երկյակի նկատմամբ (6-4, 6-3):**

# «Բարսելոնն» ու «Ռեալը» պայքարում են Կակայի համար

**Այն բանից հետո, երբ «Միլանի» բրազիլացի կիսապաշտպան Կական մերժեց «Մանչեսթր Սիթի» տեղափոխվելու առաջարկը, 2007-ի լավագույն ֆուտբոլիստի համար պայքարում են իսպանական երկու անվանի ակումբները՝ «Բարսելոնն» ու «Ռեալը»: Ըստ իսպանական լրատվամիջոցների, Կակայի ձեռքբերումն այդ ակումբներում կայանալիք նախագահական ընտրություններում հավակնորդների համար կարող է հաղթաթուղթ լինել: Գաղտնիք չէ, որ եթե ակումբի նախագահի պաշտոնի թեկնածուն հայտարարի, որ ընտրվելու դեպքում թիմ կհրավիրի Կակային, ապա ընտրություններում շատ ձայներ կստանա:**





**«Ռեալի» նախագահի պաշտոնը կրկին ստանձնելու ցանկություն է հայտնել ակումբի նախկին նախագահ Ֆլորենտինո Պերեսը՝ հայտարարելով, որ պատրաստ է թիմ հրավիրել Կակային: Վերջինս հրաժարվել էր «Մանչեսթր Սիթի» տեղափոխվելուց, թեեւ անգլիական ակումբը նրան շատ բարձր աշխատավարձ էր առաջարկել: Սակայն Կական չցանկացավ խաղալ մի թիմում, որը չեմպիոնների լիգայում հանդես չի գալիս: Իսկ ահա «Ռեալի» եւ «Բարսելոնի» պարագայում իրավիճակը բոլորովին այլ է: Հիշեցնենք, որ Կական 2003-ին էր տեղափոխվել «Միլան» բրազիլական «Սան Պաուլու» ակումբից: Իտալական ակումբում հանդես գալու տարիներին նա բազում նվաճումների է հասել:**

# Մեյվեզերը 6 մլն դոլարի հարկ չի վճարել

Աշխարհի լավագույն բռնցքամարտիկ ճանաչված Ֆլոյդ Մեյվեզերը, որ վերջերս հրաժեշտ էր տվել ռինգին, ֆինանսական դժվարությունների պատճառով հնարավոր է կրկին վերսկսի ելույթները: Բանն այն է, որ ԱՄՆ-ի հարկային ծառայությունը դեռեւս անցյալ տարվա հոկտեմբերին, ավելի քան 6 մլն դոլարի հարկը չվճարելու համար կալանք է դրել բռնցքամարտիկի ունեցվածքի վրա: Նա հարկային ծառայությանը պարտք է դեռեւս 2007-ից: Բռնցքամարտիկի վիճակն էլ ավելի վատթարացավ անցած տարվա ամռանը տեղի ունեցած կողոպուտից հետո, երբ նրա տանից մոտ 7 մլն դոլար արժողությամբ զարդեղեն էին գողացել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW 8.QXD 1/29/2009 11:04 PM Page 1



# «Ի դեմ, ապրիլի 24-ին...»

*1-ին էջից*

Նալբանդյան-Բաբաջան նախորդ օրվա հանդիպումը, ինչպես NTV-ն է վկայում, տեղի է ունեցել Ցյուրիխի օդանավակայանում եւ եղել է նախնական, որովհետեւ վերջինը նշել է նոր հանդիպման մասին, որը նախատեսվում էր Թուրքիայի վարչապետի հետ ՀՀ նախագահի երեկվա հանդիպումից առաջ: Ի դեպ, նախագահ Սարգսյանը վարչապետ Էրդողանի հետ հանդիպելու էր Դավոսում Երեւանի ժամանակով 22.30-ին, ուստի արդյունքների մասին տեղյակ լինել չէինք կարող:

Պարզապես հայտնի էր, որ հունվարի 28-ին Անկարայում վարչապետ Էրդողանը չէր բացառել ՀՀ նախագահի հետ հանդիպման հնարավորությունը, այսինքն՝ լրագրողներին պատասխանելիս նա էլ զգուշավորություն էր ցուցաբերել: Մինչդեռ Ցյուրիխում հանդիպման հավանականության եւ ապրիլի 24-ի մոտեցման առնչվող հարցին ի պատասխան, նա ասել էր. «Այդ հանդիպումը խոչընդոտող որեւէ հանգամանք չկա: Հնարավոր է, որ հանդիպենք: Սակայն հանդիպումը մի հարց է, ապրիլի 24-ը՝ բոլորովին այլ: Ի դեպ, ապրիլի 24-ին աշխարհը չի քանդվում: Անհրաժեշտ է, որ հարցին մոտենանք նաեւ այս տեսանկյունից: Մենք ամեն կերպ դրսեւորել ենք մեր անկեղծությունը: Միշտ ասում եմ: Հայաստանի առջեւ ի սկզբանե բացել ենք Թուրքիայի օդային տարածքը: Ներկայումս մեր երկրում, առանց անձնագրի, բնակվում է շուրջ 40 հազար հայաստանցի: Մեր միջոցներով վերականգնել ենք Աղթամար կղզու հայկական եկեղեցին: Այս ամենը ժեստ է: Հակառակ դրան, հայկական սփյուռքը շարունակում է գործել: Ակնհայտ նկատում ենք, որ այդ գործունեությունը ծավալվում է: Սակայն ես տեսնում եմ, որ Հայաստանի ներկա վարչակարգը դրան հավանություն չի տալիս»:

Այնուհետեւ Դավոսում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին հանդիպելուց հետո վարչապետ Էրդողանը անդրադարձել էր ՀՀ նախագահի հետ նախատեսվող հանդիպման օրակարգին: Թուրքիայի վարչապետը նշել էր. «Սարգսյանից առաջ հանդիպեցի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւ եղբորս հետ, ինչը չափազանց կարեւոր է: Այդ հանդիպումը որոշ իմաստով կազմելու է Սարգսյանի հետ առաջիկա հանդիպման շրջանակը: Մենք երբեւէ չենք կարող Լեռնային Ղարաբաղի հարցում միայնակ թողնել Ադրբեջանին: Այսինքն մեր խնդիրները ինչոր տեղ կապակցված են Ադրբեջանին: Այս հարցում պետք է որ Հայաստանը անհրաժեշտ ըմբռնում ցուցաբերի: Երեկվա հանդիպումից հետո ՀՀ նախագահի հետ նախատեսվող այսօրվա հանդիպումը կարող է որոշակի ուղեգիծ հանդիսանալ, եթե Հայաստանը անկեղծություն դրսեւորի հանդիպումներում»:

Վարչապետ Էրդողանը, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, հայ լրագրողի հարցին պատասխանելիս նշել է, որ իր համար հուզող է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումը, ավելացնելով. «Սակայն չեմ կարող իմանալ, թե դա որքան է հուզում հայաստանյան կողմին»: Նույն աղբյուրի համաձայն, հանդիպումը դրական քայլ է համարել նախագահ Սարգսյանը:

Ինչո՞վ են պայմանավորված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանն առնչվող թուրք լրագրողների հարցին արտգործնախարար Բաբաջանի Անկարայի օդանավակայանում տված խուսափողական, իսկ վարչապետ Էրդողանի զգուշավոր պատասխանները: Ըստ երեւույթին, այդ հանդիպումը շահարկելու Թուրքիայի հասարակական-քաղաքական որոշ շրջանների եւ կենտրոնական որոշ թերթերի պատրաստակամությամբ, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված հնարավոր զարգացումների հավանականությամբ, ինչպես նաեւ հանդիպման շուրջը հնարավոր աղմուկը կանխելու եւ դա հակազդեցությունից զերծ պահելու մտահոգությամբ: Ակնհայտ է, որ վերոհիշյալ աղմուկն ու հակազդեցությունը դեռ չկայացած կմթագներ ՀՀ նախագահի հետ վարչապետ Էրդողանի հանդիպումը:

Իրականում այս ամենի հիմքում Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը Թուրքիայում ցուցաբերվող անհանդուրժողականությունն է: Դա ենթադրում է վարկաբեկում, իշխանություններին վարկաբեկելու համար վերոհիշյալ թերթերում օգտագործում են «թուրք ազգին ցեղասպանության մեջ մեղադրող եւ Լեռնային Ղարաբաղը օկուպացման տակ պահող Հայաստանի հետ Էրդողանի կառավարության մերձեցումը» ու մերձեցման շուրջ անախորժ աղմուկ են բարձրացնում երկրում:

Աղմուկի առումով թերթերին են միանում հասարակական-քաղաքական շրջանակները, մասնավորապես Ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունները, թե Հայաստանի հետ մերձեցումը ԱՄՆ-ի եւ Եվրոմիության հրահանգն է, Էրդողանի կառավարությունը անձնատուր է եղել վերջիններիս, մերձեցման նրանց հրահանգը կատարելիս դավաճանում է Թուրքիայի ազգային շահերին: Ի դեպ, վերոհիշյալ կուսակցությունները չորս թուրք մտավորականների «հայերից ներողություն խնդրելու» ստորագրահավաքի համար էլ մեղադրել էին Աբդուլլահ Գյուլին, թե Երեւան կատարած անհաշվենկատ այցով հենց նա է խրախուսել նրանց, որոնք իրենց կամ «թուրքական պետության վրա, այսպես կոչված, ցեղասպանություն իրագործողի պիտակ են կպցնում»: Եթե ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման արտասանի «ցեղասպանություն» բառը, ապա դա կվերագրվի Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը եւ դրա համար հարձակումների թիրախ կդառնա վարչապետ Էրդողանը: Այսինքն՝ հանդիպումը որոշակի ռիսկ է պարունակում նաեւ Էրդողանի եւ նրա կուսակցության համար:

# Օրենքի դրույթները չեն կիրառվում, խախտվում են նաեւ էթիկայի նորմերը

Հայկական գովազդային խորհուրդը ստեղծվել է 2005-ին: Խորհրդի ստեղծման եւ գործունեության նպատակն է պաշտպանել սպառողներին անբարեխիղճ, ոչ հավաստի, ակնհայտ կեղծ գովազդից, ինչպես նաեւ ՀՀ «Գովազդի մասին» օրենքի հոդվածներին համապատասխան կարգավորիչ գործառույթներ իրականացնել գովազդի շուկայում:



Հայկական գովազդային խորհրդի անդամները անցկացրել են մոնիտորինգ՝ գովազդի շուկայում հայտնաբերելով մի շարք խախտումներ:

«Ռադիո Վան» ռադիոկայանի համակարգող եւ ծրագրերի տնօրեն **Գոռ Գրիգորյանը** նկատում է, որ այս հարցերն առաջացել են, քանի որ «Գովազդի մասին» օրենքը պատրաստելիս մասնագետների հետ քննարկում չի եղել:

Երեկ «Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում լրագրողներին ցուցադրվեցին գովազդային հոլովակներ, որտեղ, ըստ ակումբի բանախոսների, խախտվում են «Գովազդի մասին» օրենքի մի շարք դրույթներ:

«Շարմ հոլդինգ»-ի գործադիր տնօրեն **Կարեն Ղազարյանը** նկատում է, որ, օրինակ, «Բորժոմ» հանքային ջրի գովազդային տարբերակը ռուսերեն է, սակայն օրենքն իր հերթին պահանջում է, որ գովազդի լեզուն պետք է հայերենը լինի: Ակումբում ցուցադրվեցին նաեւ «Տիսսո» ժամացույցների, «Բոշ» օդորակիչների, «Հայ կոլայի» գովազդային հոլովակները, որոնցում, ըստ բանախոսների, առկա են մի շարք կոպիտ խախտումներ:

Պետք է նշել, որ հեռուստառադիոգովազդի օրենքի վերահսկողությունը իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը:

Իսկ թե ի՞նչ է անում հանձնաժողովն այդ ուղղությամբ, ակումբի հյուրերը նկատեցին, որ ոչինչ չի արվել ու չի արվում. մինչդեռ, ըստ Կարեն Ղազարյանի, արտաքին գովազդը նաեւ պետք է վերահսկվի եւ կարգավորվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից. «Իսկ հանձնաժողովն իր ցանկությամբ է կիրառում տուգանք. սա էլ ի վերջո կոռուպցիայի է հանգեցնում: Որքա՞ն է տուգանքի չափը, եւ համապատասխանո՞ւմ է օրենքի խստացումներին՝ ոչ ոք չգիտի»:

Հայկական գովազդային խորհրդի նախագահ **Արմեն Մարտիրոսյանը** նշեց, որ դատախազությունը կարող է պատժել այդ հանձնաժողովին, քանի որ վերջինս աշխատավարձ է ստանում, որպեսզի վերահսկի ցուցադրվող գովազդը:

Կարեն Ղազարյանի կարծիքով էլ, եթե հանձնաժողովը դիմել է հեռուստաալիքին, որ գովազդ չհեռարձակվի, բայց հեռուստատեսությունը շարունակում է գովազդի ցուցադրումը, պետք է հեռուստատեսությանը դատի տալ:

Բացի այս, բանախոսները նշում են, որ հեռուստաընկերություններում մեծ է ստվերը. հարկերն էլ համապատասխան քանակով չեն վճարվում, քանի որ կանխիկով շատ գործարքներ են կատարվում:

Ա. Մարտիրոսյանի խոսքով, այսօր կան նաեւ բազմաթիվ գովազդներ, որոնք երեխաների վրա կարող են բացասական ազդեցություն թողնել, սակայն այսօր օրենքում անթույլատրելի գովազդի հեռարձակման համար տուգանք չկա սահմանված, միայն նախազգուշացում է:

Լրագրողներից մեկը նկատեց, որ լեզվի խախտումներ կան նաեւ «Ռադիո Վանում», որին էլ արձագանքեց Գոռ Գրիգորյանը. ««Ռադիո Վանը» նույնպես խախտում է կանոնները. մենք խախտում ենք կանոնները, քանի որ մեզ մոտ շատ գովազդներ ռուսերեն լեզվով են. այդպես է ուզում գովազդատուն, եւ մենք ռուսերենով ենք պատրաստում. լեզուն հայերենն է, բայց այն գրված չէ ռադիոյի համար: Սրա դեմ ակտիվորեն պայքարում էր Ամալյանը եւ որոշ ժամանակով ուզում էին մեր հաղորդումը փակել, որ շատ դեպքերում ոչ միայն գովազդները, այլեւ հաղորդումներն են ռուսերեն: Գրված չէ, թե ինչպե՞ս անել, որ հաճախորդի գովազդը հեռարձակվի թարգմանությամբ: Երբ օրենք կլինի, մենք կմտածենք՝ ինչպես այդ ուղղությամբ շարժվել»:

Ըստ Գ. Գրիգորյանի՝ նույնը կարելի է ասել նաեւ ինտերնետային գովազդի մասին:

**Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

## Վերավարկանշվել է «Եվրոթերմ» ՓԲԸ-ն

ՀՀ կենտրոնական բանկը վերավարկանշել է «Եվրոթերմ» ՓԲԸ-ի վարկանիշը՝ շնորհելով B վարկանիշ:

*ԿԲ մամուլի ծառայություն*

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհուրդը հայտնում է.

Համաձայն բնական գազի օգտագործման կանոնների պահանջների, այն շինություններում, որտեղ տեղադրված են կենցաղային գազասարքեր, այդ թվում ջրատաքացուցիչ, ջեռուցման սարք, օգտագործման ժամանակ՝ այրման արգասիքների հեռացման համար անհրաժեշտ է գազի սարքավորման ծխանցքին հավասար կամ մեծ տրամաչափ ունեցող ծխատար, օդի հեռացման համար արտածող օդատար շենքի տանիքից վեր դուրս բերված՝ պահանջվող բարձրությամբ:

Մարդկանց անվտանգությունը ապահովելու նպատակով «Միությունը» խորհուրդ է տալիս գազի սարքավորումներից օգտվելուց առաջ օդափոխել շինությունը, որտեղ տեղադրված է գազի սարքավորումը: Նախքան օգտվելը ստուգել ծխնելույզի քարշի առկայությունը: Քարշի առկայության դեպքում միայն օգտվել գազի սարքավորումից:

Գազասարքի օգտագործման ժամանակ ծխնելույզի քարշի նվազեցման, անսարքության, թուլության ժամանակ գազի թերայրման հետեւանքով առաջանում է ածխածնի օքսիդ /շմոլ գազ/, որը ուժեղ թունավոր գազ է եւ դրա աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ հանդիսանալ:

Խորհուրդ է տրվում նման դեպքերում մաքրել ծխնելույզը եւ նոր միայն օգտագործել գազասարքը:

Ծխաօդատար ուղիների մաքրման, վերանորոգման աշխատանքներ կատարելու համար կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 443432:

Հոդվածը ընթերցելիս այն ընկալել որպես նպատակահարմարության տեսանկյուն:

*«Հայաստանի հրշեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ»*
*իրավաբանական անձանց միություն*
*Ոչ պաշտոնական հրապարակում*

# Մայքլ Ամերյանը կարող է դառնալ Լոս Անջելեսի գլխավոր դատախազ

Մայքլ Ռ. Ամերյանը մոտենում է Լոս Անջելեսի գլխավոր դատախազի պաշտոնի համար մրցապայքարի կիսաեզրափակիչ փուլին, հաղորդում է «Կալիֆոռնիա կուրիեր»-ը: Ներկայումս Ամերյանը զբաղեցնում է քաղաքային դատախազի տեղակալի պաշտոնը: Իր ծառայության տարիներին նա լուրջ պայքար է մղել հանցավոր խմբավորումների, ընտանեկան բռնության եւ այլ հանցագործությունների դեմ: Ամերյանը Մեծ եղեռնից ԱՄՆ գաղթած որբերի թոռ է: Նրա հայրը՝ Ռիչարդ Ամերյանը Հարավային Կալիֆոռնիայի առաջին հայ դատավորն է եղել 14 տարի: Ամերյանի կարիերան սկսվել է 20 տարի առաջ: Նա նաեւ աշխատել է սենատոր Դայան Ֆայնստայնի գրասենյակում, երբ դեռ ուսանում էր քոլեջում: Ընտրվելու դեպքում Մայքլ Ամերյանը կդառնա Լոս Անջելեսի առաջին հայ ընտրովի պաշտոնյան: Բացի իր հիմնական աշխատանքից, Ամերյանը նաեւ «Ջորջ Իգնատիուս հիմնադրամի» հավասարմասարն է, որը հարյուր հազարավոր դոլարների բարեգործություն է կատարում ամբողջ աշխարհում սփռված հայկական կրթական, մշակութային, կրոնական կազմակերպություններին օգնելու համար, հաղորդում է «Նոյյան տապանը»:

www.azg.am

## ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

մեկ սենյականոց բնակարան Տիգրան Մեծ պողոտայում: Արեւկող է, կահավորված, ապահովված է տաք եւ սառը մշտական ջրով:

**Զանգահարել 57-62-67, (091) 01-69-17:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.01.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: